



ԱՆԱԿԻՏ  
 ՀԱՆՐԱՅԻՆ ԱՄՍՏԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԹԻՅԱՏԱԿԱՆ

7. ՏՄՐԻ

ՅՈՒՆԻՍ 1902

ԹԻՒ 7

ԲԱՐԻՉ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանուն բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյսը կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախտեալական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Եթէ հոգին չթարգմանէր, չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած յիշն բնութիւնը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ

Այն բաժանորդները որ չորրորդ տարեշրջանի բաժեզինը չեն վճարած, կը խնդրենք հաճին անյապաղ վճարել զայն՝ եթէ կ'ուզեն որ այսուհետեւ շարունակեն Անահիտ ստանալ :

ԱՂԳԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

POÈMES ARMÉNIENS, ANCIENS ET MODERNES

TRADUITS PAR

A. TCHOBANIAN

ET PRÉCÉDÉS D'UNE ÉTUDE DE

GABRIEL MOUREY

Գին 2 ֆրանկ

Գնել փափաքողները պէտք է դիմեն հետեւեալ հասցէին՝

LIBRAIRIE A. CHARLES: 8, Rue Monsieur-le Prince, PARIS.

Կը գտնուի նաեւ Փարիզի բոլոր մեծ գրավաճառանոցներուն մէջ:

ՄԱՍԼՈՅ ՏԱԿ

ՀԲԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ «ԱՆԱՀԻՏ»Ի ԹԻԻ Ա

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿԻ

Ե Ր Գ Ե Ր Ը

(Քննադատական ուսումնասիրութեամբ մ'ընկերացած, աւելի մանրամասն եւ ընդարձակ քան «Անահիտ»ի «Նահապետ Քուչակի Երգերը» վերնադրով յօդուածը :

Պիտի բաղկանայ առնուազն հարիւր մեծադիր երեսներէ :

Գին 2 ֆրանկ

«Անահիտ»ի բաժանորդներուն համար՝ 1 ֆրանք 50 սանթիմ :

Պէտք փափաքողները պե՛տք է դիմեն Անահիտի խնրագրութեան, զինը կանխիկ վճարելով :

# ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Մ Ս Ե Ս Յ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ

Դ. ՏԱՐԻ

ՅՈՒԼԻՍ 1904Է

ԹԻԻ 7

ՔԱՂԱՔՈՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՒ

ՈՒՂԱՄՏՈՒԹԻՒՆ

Վերջերս, պ. Կ. Թումայանի բոլոր հայ խմբագիրներուն ուղղած էր շրջաբերական մը, որով ցաւ կը յայտնէր հայ մամուլին մէջ «կոպիտ» բացատրութեանց գործածման աւանդակներն համար, եւ կը հրաւիրէր մեր հրատարակագիրները իրարու հետ աւելի «քաղաքավար» ոճով մը վիճելու: Պ. Թումայանի իր բողոքը կ'արձակէր ոչ թէ որոշ անձի մը դէմ, այլ ամբողջ հայ մամուլին դէմ անխաբի: Բիրտ վերագիրներու օրինակները զոր կը յիշէր, աւանդած էին «Դրօշակ»էն ինչպէս «Անահիտ»էն, «Նոր Կեանք»էն ինչպէս «Լ'Արմէնի»էն, եւն, եւն:

Պ. Թումայանեանի անկողմնակալութիւնը անվիճելի էր: Ինչ որ կար վիճելի այդ աւերին մէջ, այն ձեւն էր որով ան յղացուածա

ու գործադրուած էր: Պ. Թումայանի կը բողոքէր «բառերու» դէմ, եւ ոչ թէ այն «բարբերու» դէմ որոնք յառաջ կը բերեն այդպիսի բառերու գործածութիւնը, եւ պ. Թումայանի կը բողոքէր բառերուն դէմ առանց ուրիշ վերապահումի, ոչ մէկ կարեւորութիւն չտալով այն պարագաներուն որ երբեմն անոնց գործածութիւնը արդարանալի կը կացուցանեն: Պ. Թումայանի կը կարծէ թէ ոչ մէկ պարագայի մէջ ներելի չէ այդպիսի բառեր գործածել, եւ կ'երեւակայէ թէ այդպիսի բառերու գործածութեան զագարումը բաւական կրնայ ըլլալ մեր բարբերը մաքրելու: Հոս է որ պ. Թումայանի կը սխալի. քաղաքավարութիւնը ամենասիրուն յատկութիւն մըն է, զոր ոչ ոք կը յարգէ ինծի չափ, բայց ուղղամտութիւնը, անկեղծութիւնը, ճշմարտասիրութիւնը աւելի մեծ յատկութիւններ են. Կան մարդիկ որ միշտ քաղաքավար լինու մը կը գործածեն, եւ իրենց գործերուն մէջ կը գնին այն ամբողջ վատութիւնն ու ապիրատութիւնը որուն մարդ մը կարող է, այդպիսի մարդոցմէ հազար անգամ նախամեծար կը համարիմ քույրմսկանի մը որ գործածած բառերուն մէջ բարակը չի փնտօնը, բայց շիտակ ու բարի հոգի մը ունի:

Պ. Թումայանի կոչը այլապէս դեղեցիկ եւ ազդեցիկ պիտի ըլլար եթէ ան բողոքէր ոչ թէ բառերու դէմ, այլ այն ոճրագործ արարքներուն դէմ որով մեր գործիչներէն շատերը՝ իրենց պաշտօնակիցները բարոյապէս սպաննելու համար՝ դիտակցաբար կը զրպարտեն. կը ստեն, կը դաւեն : Հոտ է մեր բուն վէրքը, մեր մահացու վէրքը. անկի՛ց բուժուելու պէտք է մտածենք ամէն բանէ առաջ : Բիրտ բառերու գործածութիւնը աղէտք մը չէ, եւ, կարգ մը պարագաներու մէջ, պէտք մըն է : Եւրոպական գրականութեան ու մամուլին ամենագեղեցիկ էջերէն սմանք — Յոբնազէն մինչեւ Միրպօ, — գոյութիւն չէին ունենար, եթէ պ. Թումայանի քարոզած սխտեմը ընդունուած ըլլար ամէն տեղ : Մարդկային տեսակ մը բարքեր եւ տեսակ մը տիպարներ երբեմն ցածութեան այնպիսի աստիճանի մը կը հասնին, որ այլ եւս անկարելի է, եւ նոյն իսկ աններելի կ'ըլլայ, զանոնք որակել սալոնի բառերով. բուն զայրոյթը զոր վատութեան կուտակումները կ'ազդեն ազնիւ հոգիի մը, զայն կը պարտաւորեն գործածել այն խաբանող բառերը որոնք արդէն այլ եւս իրենց արտաքին ազդութիւնը կը կորսնցնեն ու հոյակապօրէն գեղեցիկ կը դառնան, քանի որ կը ձգտին Չարիքը ջախջախելու, անիրաւեալին վրէժը լուծելու : «Պատուհասքներ»ը իրենց բոլոր ուժէն ու նշանակութենէն պիտի զրկուէին, եթէ Հիւկօ իր այդ սրամտութեան երգերը զտած ըլլար բոլոր այն կարծր բառերէն որ գնդակի պէս կը սուլին ու զաշոյնի պէս կը ճեղքեն :

Անշուշտ դատապարտելի են անոնք որ կուպիտ բացատրութիւններ կը գործածեն՝ առանց իրաւունք ունենալու. կամ անոնք որ կը սիրեն աղտոտ բառերը, հայհոյանքները եւ տարին տասերկու ամիս իրենց ոճն անոնցմով կը զարգարեն. ատոնք փաստը յիշոցքով փոխանակող ողորմելիներն են կամ գոհակութեամբ խմորուած մտքեր որոնց բնական տարրն է ազբը. ատոնց դէմ բողոք մը հասկանալի կը գտնէի. բայց ի՛նչ իրաւունքով կարելի է մեղադրել հրապարակագիրը կամ գրագէտը, որ, ոճին գեղեցիկութեան, վայելչութեան, ազնուութեան սէրը պ. Թումայանին չափ եւ անկէց աւելի ունենալով հանգերձ, տեսակ մը վիթխարի, —

եւ գերադրականօրէն «ապացուցուած» — վատութիւններու հանդէպ իր զդացած բուն զայրոյթը թարգմանելու, այդ վատութիւնները խաբանելու համար այնպէս ինչպէս արժանի են, կը դիմէ երբեմն այն միակ բացատրութիւններուն որ կրնան զանոնք որակել :

Պ. Թումայան կը հրաւիրէ հայ հասարակութիւնը որ, բիրտ բառերու գործածութիւնը զազդեցնելու համար, մերժէ կարգալ այդ ոճով շարադրուած բոլոր գրութիւնները, այդ պարագային, պ. Թումայանի index ին կնթարկուած հրատարակութիւններուն մէջ պիտի մտնեն Աստուածաշունչը, Աւետարանը եւ Խորենացին : Մարգարէները հեռու են քաղաքավար ոճի մշակողներ ըլլալէ. չըջկայ վատութիւնէն զգուած, կատղած հոգիներ էին անոնք որ իրենց ցատու մը կը պոռային խածնող բառերով :

«Ձիա՛րդ եղեւ պոռնիկ քաղաքն հաւատարիմ Սիովն» Եւսայի, գլ. Ա.

«Եւ դարչեցուցես զկուսն զարծաթապատս եւ զոսկեպատս, մանրեացես զնոսս եւ հոսեացես իբրեւ զջուր դաշտանաց, եւ իբրեւ զաղբ մերժեսցես զնոսս : » Եւսայի, գլ. Լ :

Յիսուսն իսկ որ ամենէն հեղաբարոյ, ամենէն քաղցր հոգեով էակն էր որ երեցցաւ երկրիս վրայ, ունեցաւ զայրոյթի վայրկեաններ — զոր ազնիւ հոգիի մը անհնար է չունենալ եւ տախակ հոգիներու անհնար է ունենալ, — որոնց մէջ սապէս բառեր կը նետէր կեղծաւորներուն ու խաբարաներուն երեսին :

«Առաջնորդը կոյրք, որ զմզուկս քամէք եւ զուլտս կլանէք : . . . Փարիսեցի կոյր, սրբաւնախ զներքին բաժկին եւ շսկաւառակին. գիլինիցի եւ արտաքինն նոցա սուրբ : Վայ ձեզ : . . . զինման էք գերեզմանաց բուլոց, որ արտաքոյ երեւին գեղեցիկ, եւ իներքոյ լի են ոսկերօք մեռելովք եւ ամենայն պղծութեամբ : Նոյնպէս եւ դուք արտաքոյ երեւիք մարդկան արդարք եւ իներքոյ լի էք կեղծաւորութեամբ եւ անօրէնութեամբ : . . . Օձք՝ ծնունդք իժից, զիա՛րդ փախիցէք ՚ի գատաստանէ գեհենին :

Աւետարան ըստ Մատթեոսի, գլ. իդ. ժգ.

Ու Խորենացին, մեր ամենէն մեծ ու ազնիւ գրագէտներէն մէկը, սապէս կը խօսէր իր ժամանակակից սրբիկաներուն վրայ :

«Ողբս՝ մ՝ զքեզ Հայոց աշխարհ, ողբամ զքեզ, հանուրց հիւսիսականաց վեհագոյն. զի բարձաւ թագաւոր եւ քահանայ, խորհրդական եւ ուսուցող, վրդովեցաւ խաղաղութիւն, արմատացաւ անկարգութիւն, զրդուեցաւ ուղղափառութիւն, կարկայեցաւ տգիտութեամբ չարափառութիւն :

«Ողորմի՛մ ի քեզ, եկեղեցի հայաստանեայց, իրթնացեալ ի բարեզարդութենէ բնմին, ի քաջէն զրկեալ հովուէ եւ հովուակցէ : . . .

« . . . Վարդապետք յիմարք եւ ընդինքնահաճք, անձամբ առեալ պատիւ եւ ոչ յԱստուծոյ կոչեցեալ, արծաթով ընտրեալք եւ ոչ հոգւով, ոսկեւէրք, նախանձոտք, թողեալ զհեղութիւն, յորում աստուած ընակէ, եւ զայլք եղեալ՝ զիւրեանց հօտս գիշտեցող :

«Կրօնաւորք կեղծաւորք, սնափառք, անձնացոյցք, պատուասէրք քան թէ արծաթասէրք .

«Վիճակաւորք հպարտք, դատասացք, զբաբանք, ծոյլք, ատեցողք արուեստից եւ վարդապետական բանից, սիրողք վաճառաց եւ կասակերպութեանց :

«Աշակերտք հեղք առ ուսումն եւ փոյթ առ ի վարդապետել, որք նախ քան զտեսութիւնն աստուածաբանք :

«Ժողովրդականք վէսք, ստահակք, մեծախօսք, անվաստակք, փախչողք ի ժառանգութենէ .

«Զօրականք անիրաւք, ստապարծք, զինատեացք, պղերգք, հեշտասէրք, անժուժկալք, կողոպտիչք, համբարոյք աւազակաց :

«Իշխանք ամբաստմբք, զողակիցք գողոց, կծիլք, կծիլք, ժլատք, աղահք, յափշտակողք, աշխարհաւերք, ալտեղասէրք, ծառայիցն համամիտ :

«Դատաւորք ամարդիք, սուտք, խարդղք, կաշառառուք, անընտրողք իրաւանց, անհաստառք, հակառակսղք : եւ բարձումն առհասարակ յամենեցունց սիրոյ եւ ամօթ . . . »

Առեւնացի, Գլխք երրորդ, էջ 276 :

Յ. Գ. — Այն պահուն ուր կը հրատարակեմ պ. Թումայեանի շրջաբերականին նու իրուած այս յօդուածը, որ, ասկից 2-3 ամիս առաջ գրուած, տեղի պակասին համար չէր կրցած երեւնալ «Անահիտ»ին մէջ, պ. Թումայեան հանրային ուշադրութիւնն իր վրայ կը դարձնէ ուրիշ արարքով մը որ աւելի նշանակալից է եւ որ ուր է գովելի կողմէ զուրկ է . վերջերս պ. Թումայեան մանկավարժական թերթ մը հրատարա-

րակել սկսաւ, «Պատանի» անունով, եւ յայտարարեց թէ այդ թերթը խմբագրուած էր իր հաստատութեան մէջ պատասպարուած որբերէն . այդ պարագան էր որ մեզ մղեց լուռ մնալու այդ թերթին տարապայման անհամութեանը մասին. կարելի՞ էր խեղճ որբերու կողմէ եւ զած հրատարակութեան մը մասին խոտապահանջ երեւալ : Արդ, վերջերս, արտասահմանի լրագիրներէն տմանք յայտնեցին թէ այդ թերթը միմիայն պ. Թումայեանի անձնական խմբագրութեան պտուղն է եղեր . եւ իր թերթին վերջընթերթ թուով, պ. Թումայեան ինքն իսկ բացէ ի բաց կը յայտարարէ թէ իրօք «Պատանի»ին խմբագրութեան իր որբերը երբեք չեն մասնակցած . . . ուրեմն պ. Թումայեան իր անաջին յայտարարութեամբ հասարակութեան ըսած էր բան մը որուն ճշմարիտ չըլլալը գիտէր, եւ որբերու սրտաչարժ հովանւոյն տակ իր անընթեռնի թերթին պարապութիւնը պարակելով՝ այդ ապօրինի միջոցով ուզած էր անոր վրայ հրաւիրել հանրային ներողամտութիւնն ու նիւթական համակրութիւնը . . . Փափուկ ու քաղաքավար ոճի սիրահար պ. Թումայեանը չի՞ կարծեր արդեօք թէ այդպիսի ընթացք մը այլապէս դատապարտելի է քան կոպիտ բացատրութեանց գործածութիւնը : Իսկ «Պատանի»ի վերջին թիւը կը պարունակէ ոտանաւոր մը որ այդ ողորմելի թերթը «անհամէն» (ինչ որ անվնաս բան մըն է քանի որ անգոյ) «հրէշային»ի կը փոխէ, եւ ուրուն հրատարակումը թերեւս նոյնքան մեծ յանցանք մըն է որքան որբերու անունին շահագործումը, որովհետեւ Գեղեցկութեան զէմ հայհոյանք մըն է : Ահա երկու տուն՝ այդ բանաստեղծութիւնէն (!) .

«Պատանի»ի ուղղութեան  
ծափ կը զարնեմ խնդութեան .  
Թող կեցցէ՛ միշտ յաւիտեան  
հայ գաղութն ալպիոնեան :  
Կեցցե՛ն Անգլիոյ  
սիրուն(?) հայ ծնողք .  
ապրին Անգլիոյ  
հայկեան ընակողք .  
Թող ձեր խոկմանց որոտան  
ամպերն մրրկատատան .  
կայծակնահար ըրէք դուք  
Ծոյլն, անտարբերն ու սատան :

Շատ աւելի գոհ պիտի ըլլայի եթէ պ. Թումայեան ազուր բարկութեան էջ մը հրատարա-

կած ըլլար կորեկացիին, Եսայիին եւ Յիսուսին ոճովը (բան մը որուն ամէն մարդ կարող չէ անշուշտ) փոխանակ այս տեսակ խաղաթուղիներն նետել ու հասարակութեան առջեւ :

Լաւագոյնը այն պիտի ըլլար որ պ. թու մայրան վազ անցած ըլլար խմբագրական փաստերու թիւններէն (քանի որ յայտնապէս ոչ մէկ ձիրք չունի այդ գործին համար) որոնք ղինքը «անճշմարտախօսութեան» իսկ մղեցին : այդ խոհեմ եւ իմաստուն ընթացքով, պ թու մայրան պահպանած պիտի ըլլար յարգանքը զոր ամէնքս ունէինք իր մասին՝ ջարդերու միջոցին իր սրտայոյզ բանախօսութիւններով հայկական դատին մատուցած ծառայութեանցը համար :

Ա . 2 .

### ՄԵՐ ԴՈՒՑԻՆԵՐԸ

— 0 —

Թ Ա Թ Ը

(Շար.)

### Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն

Թաթ մը եթէ մահմետական դառնալ ուզէ՝ չեն ընդունիր . իսլամանալու համար անոնց միակ ճամբան է նախ քրիստոնեայ դառնալ եւ եօթը տարի յետոյ միայն իսլամութեան կ'արժանանան , (պարձա՛նք քրիստոնէից որ Թաթե՛րէն գերիվեր են եղեր Մուհամմէտի իւմէթներու քով) , սակայն երբ Թաթ մը քրիստոնեայ ըլլալ փորձէ , կը պատժուի միեւնոյն տեսակ ինչպէս եթէ Տաճիկ մը քրիստոնեայ եղած ըլլար :

Շէրիաթի չեմ գիտեր որ մէկ յօդուածը կը տրամադրէ թէ ոչ-մահմետականներու վկայութիւնն ու երգումը ազգեցութիւն չունին Մուհամմէտի ճշմարիտ որդիներու վրայ : Երբ Նըսրայրիները դատի ներկայանան Թուրքերու հետ , Թուրքերը սկիզբը իբրեւ մահմետական կ'ընդունին զանոնք , որ շէրիաթով վճռուի իրենց խնդրը զատին սկսուելէն յետոյ անոնք մահմետականութենէ կը զրկուին , հետեւաբար իրենց իրաւունքներէն , եւ կը սուտեն :

Կը պատահի երբեմն որ թուրք բէկ մը անհղան պարտէզ մը կը գնէ թաթերէն , անոր

մէջ կը նստեցնէ ուրիշ գիւղացի սեփականազուրկ թաթ մը իբրեւ գործաւոր՝ անոր տալով լիակատար իշխանութիւն միւս գիւղացիներու վրայ . այդ գործաւորը կը ծեծէ , կը դողնայ , կը կոտորէ ու կը թափէ : ազան կը վարձատրէ անոր գործունէութիւնը , ի պատասխան այն բոլոր արտասուելից գանգաւներուն , որ կը թափուին ի զո՛ւր՝ ազայի ռաքիբը : Գործաւորը կը դառնայ այդ գիւղին մուխթարը , գիւղապետը , ժողովուրդը կը վազէ կառավարութեան ազերադրեր կը մատուցանէ անոր անյարմարութեան մասին , բայց կառավարիչը չի լսեր : Ամէն անգամ որ կառավարութեան կ'երթան , բէկը կը գտնեն իրենց դէմ իբրեւ պատուէչ եւ իրենց բողոքներովը նոր նոր վնասներու պատճառ կը գտնան , այդ պարագան կը ստիպէ զիրենք եր թալ ուրիշ բէկ մը գտնել , եւ անոր ապաւինելով իրենց վրէժը լուծել :

Վրէժ լուծել ուզողը «կը ծախէ» իր պարտէզին կէսը բէկին , եւ կը մնայ միւս կէսը իրեն , այդպէսով պարձանքը ունեցած կ'ըլլայ բէկին հետ «օրթաք» (ընկեր) եղած ըլլալու , («կը ծախէ» բառը հոս չակերտի մէջ առած եմ , որովհետեւ երբ տրմակը կը դրուի օրինաւոր ըլլալու համար , «ծախեցի եւ դըրամները գանձեցի» կը գրուի , մինչդեռ անոր գանձածը միայն ընկեր ըլլալու պարձանքն է , եւ միւսէն վրէժ լուծել կարենալը , կամ ուրիշ մը վրէժ խնդրութենէն պահպանուելու յոյսը : Բայց արդիւնքը աւելի վնասակար կ'ըլլայ , գիւղը երկու մասի կը բաժնուի , կոիւր կը շարունակեն , մինչդեռ երկու թիւրք ազաները՝ քաղաքին մէջ իրարու բարեկամ՝ անոնց երկ պատակութեան շնորհիւ անոնց ռաացուածքը կ'իւրացնեն :

Երկպառակութիւնները կը ստատկանան , իրենց ծայրայեղութեան կը հասնին , կոիւներ ու սպաննութիւններ տեղի կ'ունենան , զատարաններու զիմուս կ'ըլլուի , բանտարկութիւններ կը սկսին , կաշառքներ կը տըրուին այս ու այն կողմէն , կը կշտանան թէկերու ծառաներն ալ , թուրք պաշտօնեաներն ալ , բէկերն ալ : Ու կիրքը փոխանակ նուազելու , օր ըստ օրէ կը ռաստկանայ , մինչեւ որ օր մըն ալ գիւղին անունը ա՛լ կը կոչուի «Բըֆաթ ազայի կամ Վանիտ ազայի չիւֆթիկը» : . . .

Այսպէս եւ ուրիշ վաշխառուական , բռնաւորական միջոցներով է ահա որ ս'յնքան կարճ ժամանակի մէջ Անախոքի եւ Ալեքսանտրէթի Թաթերը զրկուեցան իրենց ինչքերէն ու կալուածներէն եւ թշուառութեան ենթարկուեցան :

Հ Ե Տ Ե Ի Ո Ի Թ Ի Ի Ն

Տնտեսական ու քաղաքական այս դանազան հանդամանքներու տակ գանուող ժողովուրդը, անտարրեր չէ իր շուրջը դարձած մեքենայու թիւններուն . իր մէջ գոյութիւն ունի ազատութեան եւ յատաճադիմութեան գաղափարը, որու համար ունեցած է շատ անդամ խլըրտումներ, մասնակի կոխներ : Բայց այս ջանքերը խեղդուած են միշտ առանց ուշադրութիւն գրաւելու : շնորհիւ այն սովորական արհամարհանքին որով Թուրքերը այսպիսի գէպքերը աւազակութեան արարքներու տեղ կը դնեն . իրենք, լեռնականներն ալ, չեն ունեցած այն հաստատուն կամքն ու անձնութիւնը որ հարիւրներով ու հազարներով թափէին իրենց սահմաններէն դուրս . — Չեն ունեցած ատոր համար առաջնորդներ, չունին նաեւ բաւական զէնք, չեն ունեցած մարդ, որ կարող ըլլար զիրենք յարարեցութեան մէջ զնել առեւտրական աշխարհին հետ, փոխել իրենց ներքինը, փոխել իրենց կեանքը, կանանաւորել ու կազմակերպել ամէն բան, ստեղծել ոյժը հոն ուր լայն ասպարէզ կայ :

Նշաւ ժամանակ մը որ անոնք ունեցան այդ Մովսէսը, որ ձեռնարկեց զայդ ընելու . ուղեց զանոնք պինել ու զօրացնել եւ սահմաններէն դուրս բերել, առել Լաթաքիան, Անտիօքը եւ Ալէքսանտրէթը, նըսայրիական իշխանութիւն մը հոչակել, բայց այնքան ցնորական ու երազական ծրագրով մը, որ իր առաջին քայլերուն մէջ իսկ քայքայեցաւ : 1878 թուականին շէյխ Սալիհի որդի, Աւատուածորդի շէյխ Իպրահիմը, ընդհանուր շէյխերու պետ ու ժողովրդի հայրը, կոչ մը կարգաց ընդհ. ժողովրդին որ միացնելով իրենց նիւթական ու բարոյական ոյժերը, հաւաքուին յեղափոխութեան ու ազատութեան զրօշակին տակ, ազատին իրենց Լաթաքիայի, Անտիօքի եւ Ալէքսանտրէթի տառապեալ եղբայրները, հոչակին նըսայրիական ինքնուրոյն իշխանութիւն մը Թարապուրու Շամէն մինչեւ Ալէքսանտրէթ : »

Այդ կոչը մեծ շարժում առաջ բերաւ ձէպէլ ձէլպէն մինչեւ Ատանա, կարծես անոր կը սպասէին գարերէ ի վեր . ամէնը համակրեցան բուն խանդավառութեամբ, ընկերութիւն մը կազմուեցաւ Ատանա, երկու ամսուան մէջ, 20,000 անդդ. ոսկի հաւաքուեցաւ որպէսզի այդ նպատակը իրագործելու համար պէտք եղած «գործիքները» գնէին : Սուէտիայի Թաթերը մէկ շարթուան մէջ 4,000 ոսկի հաւաքած շէյխին տուած էին . Մէկը կը ճանչնամ որ Եռսուֆ փաշայ կը

կոչուէր, երկու պարտէզ ունէր, մէկը ծախեց 200 անդդ. ոսկիի եւ գնաց մեծ շէյխին յանձնեց այդ սուրբ նպատակի իրագործման համար . այդ անսպասելի խանդավառութեամբ մէկ կողմէն ժողովուրդը դեռ կը հանդանակէր երբ միւս կողմէն կը հոչակէին շէյխը քաղաքական պետ ու իշխանը . լեռնականները անհամբեր սպասուած ժամանակին 70 յինուոր իրկեցին շէյխին անձին պահպանութեան : որ իրենց նախնական հրացաններովը կը պահպանէին շէյխի տան շուրջը : Այդ բանը աւելի փառքի համար կ'ընէին քան թէ որ եւ է թրքական յարձակումէ կասկածելնուն համար, որովհետեւ դեռ պատերազմը չսկսած, չէին բնաւ կարծեր թէ իրենց շէյխին անձին զէմ վտանգ կայ, մանաւանդ որ այդ ատենները Թուրքերը շատ աղուէսութեամբ վարուեցան շէյխին հետ, քանիցս անգամ Անտիօքի գայմազամը եկած էր այցելութեան եւ ձեռքը համբուրած էր, իբրեւ հասարակ կամ հպատակ թաթ մը :

Քաջալերուելով թրքաց այս աղուէսային քաղաքականութենէն, ու հպարտանալով շէյխի անձնաւորութեան վրայ, այս պարզասիտ ժողովրդի խանդավառութիւնը ալ շափ չունէր . առասպելօրէն կը պատմէին շէյխին կեանքը, անոր ամէն մէկ շարժումները, եւ կը պատմէին նաեւ անոր ձգտումներն ու ծրագիրը, կը պատմէին թէ հանդանակութիւնը վերջացնելով զէնք պիտի գնէին, ապա Թուրքերը վճռաբէն երկրէն . ու իրենք պիտի կազմէին փրկող ու ինքնուրոյն ազգ մը, մեծ շէյխը իրենց իշխանը պիտի ըլլար, եւն. ատենց ամէնքը կը կատարուէր թուրքին քթին տակը, եւ թուրքը վայրկեան մ'անգամ իր շողոքորթական ճարպիկ վարմունքէն չչեղեցաւ :

Աւելի հետաքրքրականը սա է, շէյխը վերջապէս օր մը ձեռքը թաթ խեց քաղաքականութեան մէջ, որմէ մինչեւ այն ատեն դեռ հետու կը պահէր ինքզինքը, ուղեւով ազատել իրենները շէրիաթի ճանկերէն ու թուրք պաշտօնեաներու էնթրիկներէն . դատարան մը կազմեց հրաւիրելով երեւելիները որ այնուհետեւ հոն դիմեն իրենց կնճռոտ հարցերը արդարութեամբ ու անկողմնակալութեամբ լուծելու եւ խաղալիք չըլլան բէկերու եւ պաշտօնեաներու շահագործական յետին մըտքերուն, այս նորութիւնը սիրով ընդունուեցաւ, ու ժողովուրդը սկսաւ միահամուռ վազել շէյխի արդար դատաստաններուն . յետոյ քրիստոնէից հետ իրենց ունեցած մասնակի դատերն ալ հոն տարուեցան, որոնց մէջ շէյխը Մեհեմմէտ Ալիի ու Ոսթիվ Իսմաիլ փաշայի քաղաքականութիւնը կը բռնէր, այսին-

քըն գրեթէ միշտ ի նպաստ քրիստոնէից վճիռ կուտար : քրիստոնեաները շատ դո՛ւ մնացած էին , ու շատ անգամ իրենք կը հրաւիրէին թաթը մեծ շէյխի արգարագատ գատաստանին , երբ անոր հետ վէճ մը չէին կրնար լուծել : Ապա կարգը թուքերուն եկաւ : թուքի ու թաթի մէջ եղած դատը շէյխով միայն կը վերջանար , եւ թուքերը առանց շէյխաթի պիտի կորսնցնէին բնականաբար , ինչպէս ձուկը կը մեռնի առանց ջրի , այս անակնկալ փոփոխութիւնը մեծապէս կը նեղէր թուքերը , կը բողբէին կ'աղերսէին կառավարութեան վերջ մը դնել այս գարշելի կեալուրներուն անզգամութեանը , բայց կառավարութիւնը լուռ էր ու անզի կուտար :

1879ի սկիզբները առաւօս մը , յանկարծ լուր տարածայնուեցաւ թէ Հալէպի կուսակալը Անտիոք եկաւ . երկու օր յետոյ կ'ըսուէր թէ կ. Պոլսէն ալ փաշայ մը եկաւ . հետեւեալ օրը կ. Պոլսոյ փաշան Սուէտեա ուղևորեցաւ մեծ շէյխին հիւր ըլլալու , հոն նստաւ երեք օր եւ սիրալիր տեսակցութենէ մը յետոյ Անտիոք դարձաւ , նոյն օրը կուսակալը մեկնեցաւ Հալէպ , իսկ փաշան մնաց Անտիոք :

Այս անակնկալ հիւրերէն , այս խորհրդաւոր տեսութիւններէն ժողովուրդը բան մը չէր հասկնար . ամէնքը ուշադրութիւնն ին դարձուցած՝ այն կողմը սուտեր , առասպելներ , եւ թաղութիւններ կը պատմէին :

Թաթերը այդ պէպքը կը վերագրէին մեծ շէյխին փառքին , կ'ենթադրէին որ անոր հոշակը լսելով եկած էին անոր հետ տեսութեան , շէյխն անգամ անանկ էր կարծէր , որ փաշայի ծայրայեղ դովասանքներէն զինովցած , — ու թաթերու աւանգական դաղտնապահութիւնը բոլորովին մոռնալով , — պատմեր էր անոր թէ «80 հազար զինեալ մարդ ունի եւ թէ մէկ հրամանով կրնայ ամէնքը «աքի հանել . եւն. » :

Փաշան գառնալով Անտիոք խիստ յանդիմանած էր անզուոյն պաշտօնեաները , թէ ինչո՞ւ դանդաղած էին տեղեկագրելու այս լեռներու եւ ձորերու մէջ կողքիցացած ու պատսպարուած շէյխին շարժումները :

Շարաթ մը յետոյ նըսայիները օգը կը թնդացնէին իրենց մեծ շէյխին անուան ուղղուած կեցցէներով , նկատելով թուքերը իբրեւ թոյլ ու անպիսան ժողովուրդ մինչեւ իսկ կը համարձակէին զանոնք «կեալուր» , «անհաւաս» կոչել , եւ հոս ու հոն պղտիկ կոիւներ , վէճեր կը ծագէին : Յանկարծ 800 գինուոր Պապ Պօլոս դունէն Անտիոք մտան իրիկուն մը : Նոյն օրը շէյխը հրաւիրուած էր փաշայէն , որը սիրով եկած էր տեսնուելու ան-

գամ մը եւս իր մտերիմ բարեկամին հետ , եւ այն իրիկունը ոտքերը շղթայելով զայն ճամբայ հանած էին դեպի կ. Պոլիս :

Հետեւեալ օրը ամէն մարդ գիտէր թէ շէյխը չկար , բայց ոչ ոք գիտէր անոր ո՞ւր տարը ու ի՞նչ եւ ի՞նչ ըլլալը . ձերբակալութիւնները սկսան Անտիոքի , Ալէքսանդրէթի եւ Ատանայի մէջ , շէյխի պահապան զինուորները քաշուեցան դէպի իրենց լեռները . անիշխանականութիւնը կատարեալ եղաւ , եւ յուսահատութիւնը ընդհանուր :

Այն տարի մինչեւ կոկորդին կշտացան թիւրք բէկերն ու պաշտօնեաները , Ֆէլլահի պարսէզներով ու ագարակներով , ազատեցան մանր մուշր յանցարտները , յանցանքին մեծը ծանրացաւ մէկ քանի թաթերու վրայ եւ է՛ն ծանրը — մեծ շէյխին վրայ :

Հետաքրքրականը սա է թէ՛ պահ մը այդ ժողովուրդը աչքերը յառած կը մնար Անզղիոյ վրայ , որ իրենց շէյխը ազատէր ու իրենց վերագարձէր , բայց Անզղիա չչարժեցաւ . այն ասեհն զիմեցին հանգանակուած 20-30 հազար ոսկիին , եւ անով կշտացնելով կ. Պոլսոյ բարձրաստիճան պաշտօնեաները , կըրցան շէյխին կեանքը դնել եւ աքսորը 14 տարիի իջեցնել , այսպէսով 1893ին շէյխը վերագարձաւ երկիր :

Թէ ի՞նչպէս եւ ինչո՞ւ այդ ժողովուրդը Անզղիայէն կը սպասէր իր փրկութիւնը եւ ոչ Ֆրանսայէն՝ ինչպէս սովորութիւն է , — այդ կէտը չեմ կըրցած հասկնալ , որովհետեւ ինչպէս գիտենք արեւելքի մէջ «Ֆրանսազ» բառով բովանդակ եւրոպան կը հասկնան : Միայն այս կը յիշեմ թէ երբ Անզղիան անտարրեր մնաց , հայհոյեցին անոր անուներ , յուսահատեցան եւ կրկին դարձան թուքի , անոր ոտքը խոնարհելու ու անոր ծառայելու :

Տասը երկար տարիներ կատարեալ լուրթիւն մը տիրեց թաթերու մէջ , ոչ մէ շուշլուտեցաւ , ոչ մէկ ընդհարում , ոչ մէկ խըլրում , ոչ մէկ դժգոհութիւն չերեւցաւ ընդդէմ թիւրք ճնշող ու կեղեքող սխալմին կարծես թէ ա՛լ յաւիտեան մեռած ըլլաք այդ յեղափոխական ոգին որ իրենց մէջ ծներ էր , եւ անա յանկարծ նորէն զլուխը ցցեց այդ ոգին՝ կարծես գերեզմանէն ելածի պէս՝ անհանդստացնելու թուրք բէկերն ու մուխաւանդ մուլաները :

Այս անգամ բոլորովին տարբեր էր թաթերուն ուղղութիւնն ու ծրագիրը . այս անգամ շէյխ երազեր Անզղիա մը իրենց ապաւէն , ոչ ալ շէյխին վրայ կը դնէին յոյսերնին , շէյխն ուզեր իշխանութիւն , ինքնավարութիւն եւ ուրիշ ցնորքները կը բաւականանա-

յին միայն պահանջել այնքան՝ որքան կարելի  
կը լինէր ձեռք ձգել, եւ որքան անհրաժեշտ  
էր, իրենց գոյութեան պայմաններուն:

Պահանջներն շատ բնական էր, — իրաւունք  
հաւասարութիւն՝ Անտիոքի, Լաթաքիոյ եւ  
Ալէքսանտրէթի թաթ եղբայրներուն համար:  
Որովհետեւ պաշտօնական թիւրքիան, զին-

ւորականութեան, մարդահամարներու եւ այլ  
եւ այլ հանդամանքներու մէջ զիրենք մահմե-  
տական ճանչնալով. դատարաններու մէջ  
խտրութիւն չըզներ, կը խնդրէին «բարեգութ»  
սուլթանէն որ ֆէրմանով մը այդ հաւասա-  
րութիւնը շնորհէր իրենց:

Շարունակելի

ՊԱԼԱՄԻ

ԱՐՈՒԵՍՏԻ ԵՋԵՐ



ՓԺՈՒԲԸ

Հարաբաւեղակ՝ Փիլոսոփի դպրոցիս (Օրվիերոյի մայր-կիկեղեցոյն մեջ)

Իտալական արուեստի այս հոյակապ հրաշակիրտին հետ, որ անհուն ուժգնութեամբ կը  
մարմնաւորէ զարնու րելի մղձաւանջը քրիստոնէական Միտիսին զոր Միջին Դարը յղացաւ,  
չանկան կը նկատենք հրատարակել «Հայ Էջերու շարքին մէջ հին հայկական քերթուած  
մը որ ոչ նուազ սաստկութեամբ կ'արտայայտէ յաւիտենական տանջարանին արհաւիրքը:

## ՀԱՅ ԷՋԵՐ

## ՉԱՍՆ ՏԱՆՔԻԼԵԱՅ ՊԵՌՆՈՅ

Յետ քննութեանց դատաստանին, երբ ամենայն բունք վճարին,  
 Այն է չար ժամ խաւարային, որ յոյս բարեացըն հապանին,  
 Յորժամ «Նրթա՛յք յինէն» ասէ, զնոցա ամէն յոյս հապանէ,  
 Ամպ խաւարի զնոսա ծածկէ, եւ ամենայն չար պատահէ:  
 Յանկարծակի երկիր շարժէ, սանդարամետքըն պատառին,  
 Խորք անդնդոց բացեալ լինի, յոյժ զանազան շարեօք ի լի:  
 Բայց վերա՛ պն այն ահադին եւ գուր անհուն սարսափելին,  
 Տաւք զանազան շարեօք ի լին, մորմոքալից կսկըծագին:  
 Մըքձ ի տարերս հրեղէն ծովին, ի խորս ներքին յատակ ստորին,  
 Յոյժ հեռագոյն ամենեւին նայ ի խնամոցն աստուածային:  
 Զոր պատրաստեալ է անմարմնոց, չարագուշակ պղծից այսոց,  
 Տացէ ըզնոյն շարեաց մարմնոց, հետեւողաց նորին գործոց:  
 Որպէս անճառ են փառք սրբոց եւ զանազան պսակ գործոց,  
 Նոյնպէս պատիժք շարեաց մարմնոց անպատմելիք են ըստ գործոց,  
 Զոր ինչ պարգեւք տայ արդարոց, զղիմակն նորին՝ մեղուցելոց,  
 Քան ի կշիւք զնեն գործոց, կշողապէս երկուց կողմանց,  
 Որպէս արդարքըն բարձրանան, նոյնպէս չարքն ի ստոր երթան,  
 Այնպէս եւ կիրք համանգամայն զիմակ միմեանց լիցի նոցա:  
 Չկարէ քննել միտք մարդկային զոր լինելոց է անդ նոցին:  
 Բայց ըստ կարծեաց սորոյ ստորին սակաւ պատմեմք վասըն նոցին:  
 Չորս ազգ տանջանքըն գլխովին, ըստ չորս հիւթոյս ինձ պատրաստին:  
 Իսկ ըստ գծոց զանազանին, պէս պէս լկանք կայ ընդ նոսին:  
 Դէմ երեսաց՝ հուր գեհենին, եւ ի յետուս՝ սառնամանին:  
 Անքուն որդունք յաջմէ գասին, ձախմէ՝ չար հօտ զիւաց գնդին,  
 Դարձեալ չորս տանջանք լինին, ուր չէ եղեալ այլուր բնաւին,  
 Բայց այս նոցա է առանձին որ հակառակ են արարչին  
 Նախ՝ ի կենաց յուսահատին, երկրորդ՝ անչէջ հուրն է բաժին:  
 Երեք՝ մարմինք ոչ մեռանին, չորրորդ՝ տանջանքն ոչ խափանին,  
 Ի հրոյ բերանքըն պապակին, ցրտոյ առամուռնք կոփկոփին,  
 Ծըծեն որդունք զմարմինս նոցին, վէրքն յատամոցըն խորովին,  
 Աչօքըն լան կըսկծագին, ոընկամբն առնուն զհոտ զազրագին,  
 Իերանն գոչէ հառաչագին եւ մորմոքայ բոլոր մարմին,  
 Ունկամք լսէ ըզձայն գուժին, լեզուն պասքի ի ծարուին:  
 Ոտք ընթացոց ի գեհենին, ձեռքն եւ մատուռքըն տոչորին,  
 Ի վերուստ՝ բարկութիւն աստուածային որ բորբոքէ զամենեւին,  
 Եւ ի ներքուստ հուր գեհենին, որ յեռ ածէ զմարմին նոցին:  
 Որպէս ծըծումք մարմինք նոցին փութանակի հրով լուծին,  
 Որպէս հալոց ի հընոցին վառեալ մարմնով այրեն հոգին,  
 Ի կայծականց վերայ ներհեն, այս է նոցա միշտ անկողին,  
 Եւ ի հըրոյ մէջ թաւալին, չար է հանգիստն անձանց նոցին,

Լինի ճայթմունք ի մէջ հնոցին, եւ որոտմունք անազնագին .  
 Ամպն է խաւար աղջամղջին, կայծակն անձրեւ ամէ նոցին .  
 Եւ պատտոի մըմբռագին, հոսէ ըզհուրն ի մէջ հնոցին .  
 Բանմունք հողմոց սատտիկ թնդիւն, եւ բորբոքէ գրոց հրբատին .  
 Մարմինքն անանց ի մէջ հնոցին, եւ հուրն անչէջ ամենեւին .  
 Որպէս ձկունք ի մէջ ծովին յողան ի հուրն յաւիտենից .  
 Անդ ստաճունքըն կրճըտին, եւ լալ աչացն ոչ խափանին .  
 Այլ բարկութեամբըն բորբոքին ի տարտարոսն ամենեւին .  
 Բրք սատ յամեն գործոց չարեաց, անդ յաւելու նիւթ տանջանաց .  
 Որքան անպեղջ են ի մեղաց, լիցի նոցա տանջանք անանց .  
 Ոչ է հուրն այն հըրոյս նըման, 'ւ ոչ ցրտութիւն նըման ձմեւան .  
 Այլ անպատում չարիք է այն որ զատամանց կրճուին սան, .  
 Ոչ է խաւար նման գիշերոյս, եւ ոչ որդունքն որպէս յայթմունս .  
 Այլ են վիշապք լափողք մարմնոյս, խաւարն անանց է եւ անլոյս .  
 Ծըծեն որդունք զմարմինս նոցին եւ բոց հըրոյն ոչ չիջանին .  
 Այլ մորմոքին եւ կրսկըծին, եւ ատամունք կրճըտին .  
 Ազաղակեն դասք դասք նոքին եւ հառաչեն գոչմամբ ուժգին .  
 Ծուխ դուրնայ ո՛րդանց նոցին, ի յայրմանէ հըրոյ բոցին .  
 Լայն հառաչմամբ ազաղակեն, ազաղակեն, ձայնըն կարի .  
 Որպէս խանձող ի մէջ հըրին բոցակիզեալ միշտ խորովին .  
 Կաթիլ մի ջրոյ միշտ կարօտին զի պապակի բերանք նոցին .  
 Եւ տոչորի սիրան ի փորին ի բորբոքեալ հըրոյ միջին .  
 Հուրն գոչէ ձայն ուժգին եւ բորբոքէ զբոցն ի նոսին .  
 Հնչմունք հողմոց սատտիկ թնդին որոտածայն եւ անագին .  
 Խիստ է տանջանք անչէջ հըրոյն, խիստ է մորմոք ստոնամանեաց .  
 Խիստ է կրսկիծ որդան անքուն, խիստ տըրամութիւն ի խաւարոյն .  
 Խիստ լալ աչաց լինի ի հրոյն, խիստ՝ ատամանցըն կրճըտուն .  
 Խիստ՝ զազրութիւն զիւաց հոտոյն, խիստ՝ դառնութիւն մեծ եւանհուն .  
 Աչքերն ետան ի մէջ բունին, սւղեզն եփէ ի մէջ զանկին, .  
 Լեզուն չորնայ ի բերանին եւ պատտոի սիրան ի փորին .  
 Անդ արտասու քըն ծով դառնայ եւ . . . այրէ զնոսա .  
 Ազաղակեն գոչմամբ նոքա զի բարկութիւնըն բազմանայ .  
 Այն հուր այլ չէ անցանելոյ, այն սառինք ոչ են հալելոյ, .  
 Որդունք չեն մեռանելոյ, խաւարըն չէ ի լոյս դալոյ .  
 Թէ ի հըրոյն փախչիլ կամին ստոնամանեացըն հանդիպին .  
 Թէ ի ցրտոյն փախչիլ խորին, անքուն որդանցըն պատահին .  
 Վասըն դասուց մեղաւորաց Յոր զծնընդեան օրն անիծեաց .  
 Եւ տէրն ասէր վասըն չարեաց՝ Լաւ էր թէ չէր մարդն այս ծընած .  
 Բայց յայթմ եւ այս է դիտելի թէ տանջանարան ո՛ւստի կազմի .  
 Զի հուրն անչէջ ու ստոնամանի, անքուն որդունք ու խաւար պատի .  
 Յորժամ ըզդեւ յերկնից հերքեաց, տանջանարան նոցա կազմեաց .  
 Այնպէս չարչարանք նոցա հիւթեաց որ ոչ քննի մարդկան մտաց .  
 Որք հեռուին գործոց նոցին, միշտ ընդ նոսա չարչարեացին, .  
 Դեւք ըստ բնութեան իւրեանց տանջին . եւ մեղաւորքն ըստ պատշաճին .  
 Զի կայ տանջանք անմարմնական, կայ եւ մարմնոյն տանջանարան, .  
 Զի չարչարանքն է զանազան, ըստ իւրաքանչիւրոց շընութեան, .  
 Ի տարերց մասունք չարեաց կոճին, եւ տանջանք չարեաց լինին .  
 Այլ եւ չար գործք որ ընդ նոսին՝ զնոսա տանջէ անհընարին, .  
 Ի մասին այրեցմանէ հրոյ ջոկէ, եւ զցրտութիւն ի ջրոյն հանէ, .  
 Ըզչարութիւնն յերկրէ քարչէ ւ՛ յօղոյն զխաւարըն բաժանէ .

Այս չոր չարեաց մասունքս որ կայ նրբատեսակ անմարմնական .  
 Լինի նոցա տանջանարան որք չար գործոց հետեւեցան .  
 Որք աստ վառին, անդ ի յանչէջ հուրն անկանին .  
 Եւ որք Աստուծոյ սիրոյն , . . . . .  
 Շաղախին յաղտ գիծային, անքուն որդունք նոցա ծնանին,  
 Եւ խաւարեալ է աստ հոգին, նոցա խաւարն է արտաքին .  
 Աստ չորս չարիքս ի ճիւղսին, իւրաքանչիւր անձանց լինին .  
 Որք աստ չարիք մեղօք սխալին, անդ չորս աղգ չար նոցա դիպին .  
 Բայց թէ վասնէ՞ր անանց տանջին, որք անցաւոր մեղօք սխալին,  
 Ծի ըստ չափոյ մեղաց տանջին, որք աստ անգարձ կային եւ անըսպառ չարքն կամին,  
 Անանց տանջանք նոցա տացին, ըստ իրաւանց դատաստանին .  
 Որք զանագան չարիօք սխալին՝ պէսպէս տանջանք նոցա կազմին .  
 Զի որքան առատ է նիւթ հրին, այնքան սաստիկ բորբոքեսցին,  
 Վա՛յ եւ եղուկ է անդ նոցին, զի բարկացաւ Աստուած նոցին .  
 Այնպէս տանջանք ասցէ նոցին զոր ոչ քննէ միտք մարդկային .  
 Զի զգայարանք նոցա կրկին, յատուկ յատուկ պատժօք տուծին .  
 'Ի իւրաքանչիւր մասունք մարմնին կըսկըծալից մորմոքեսցին .  
 Եկայք լացցուք ամենեքեան ընդ տանջելոց որ անդ մնան ,  
 Զի չարչարանս որ ասացան ոչ խափանի մինչ յաւիտեան .  
 Այս ողբս երգոց նախաստեղծին որ գէմ բնութիւնս բարբառին,  
 Այս գուժ ողբոց միշտ կատարին յանցեալն երկրի եւ ապագին :

Վեհեհիկի վախ, ձեռագիր քիւ 559 , 2. Գ.

Ճ Ա. Ռ. Ա. Գ. Ա. Յ. Թ. Ը  
 (ԲՈՆՏՕ)

Արեւէն փրթած խարտեաչ մաղ նրբին,  
 Օգին մէջ երկայն կ'իյնայ թելն ուկի,  
 Լուսեղէն շաւիղ ուրկէ Սերովբին  
 Մարմնիկը չուշան վար կը սողուկի՝  
 Այն պահուն ուր նոր կը ծագի արփին :

Անտաններուն մէջ, ուր յորդ կը թափին  
 Ըստուերներն, հանգոյն դեղնորակ հասկի՝  
 Կը կախուի խոտին վերեւն ու թուփին,  
 Արեւէն փրթած :

Ժայռերը լուռու ու ձերուկ թմբին  
 Կը սիրեն զայն՝ երբ, զով, կը ցոլցուկի .  
 Ծածանելով թոյլ, նազոտ, մեղհակի,  
 Ժպտելով ջուրին, լերան ու ափին  
 Արեւէն փրթած .

Փ Ր Փ Ո Ի Բ Ը  
 (ԲՈՆՏԷԼ)

Ես ժանեակն իմ ձիւնագոյն,  
 Պճնող՝ կատարն ալիքին .  
 Հառաչանքն եմ կաթնագին՝  
 Տարփոտ ծովին խաժ հողոյն :

Իմ ծոցս իրեն կ'ընտրէ բոյն  
 Երփնեբանդ չողն արեղին .  
 Ես ժանեակն եմ ձիւնագոյն,  
 Պճնող՝ կատարն ալիքին :

Ոչինչ ինձմէ փափկալոյն .  
 Ծընունդ հովուն քրմայքին .  
 Կ'որորուիմ պահ մ'հեշտաղին  
 Ու կը ցնդիմ ես իսկոյն .  
 Ես ժանեակն իմ ձիւնագոյն :

# ՄԻՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

«Անահիտ»ի այս տարուան 3րդ թուով հրատարակուած միութեան խնդրոյ մասին յօդուածս սա տողերով կ'աւարտէի .

«Միութեան խնդիրը՝ իր վիճումովը՝ անխուսափելի կերպով տեղի պիտի տայ կուսակցական կուրսին վերաբարձուելուն , աւելի քան հրեք կատաղի եւ վառնդաւոր կերպով : Մեր յեղափոխական վարիչները կ'ընեն այդ աղէտքին առաջն առնել . եթէ գոնէ այդ ջանքը չընեն՝ «գուռ» պիտի ըլլան ազգին դէմ :

«Տաճիկներուն հանդէպ մեր ցոյց տուած համերաշխութեամբը կըցանք պարծննալ . ի՛նչ ամօթ մեզի համար եթէ Համաժողովին մէջ ցոյց արուած այդ միաբանութենէն քանի մը ամիս յետոյ Տաճիկն ու Եւրոպային առջեւ պարզենք կըրպար կըբոր հետ անարդ զգուսուք մը :

«Այդ ամօթը պէտք է խնայել ազգին : Պէտք չէ ըսուի որ մը թէ դրօշակեան Հայերը կըցան համաձայնիլ Մակեդոնացիներուն հետ , բայց ոչ հնչական Հայերուն հետ : Պէտք չէ ըսուի մանաւանդ թէ դրօշակեան Հայերը փութացին պատգամաւոր զրկել Տաճիկներէ կազմուած համաժողովի մը եւ մերժեցին լիազօրներ որոշել՝ պատասխանելու համար հնչական Հայերուն հրաւերին :

«Ասիկա պէտք չէ ըսուի , եւ կը յուսաւ որ պիտի չըսուի »

Արդ , ես արտակարգ միամբտ մըն եմ կելո՞ որ այս աղւոր երազին կարելիութեանը այդքան դիւրութեամբ հաւատացեր եմ : Փոխանակ վերհնչ . կուսակցութեան հրաւերին պատասխանելու յստակ եւ շիտակ որոշումով մը , «Արեւմտեան բիւրօն» «Յաւելուած» մը հրատարակեց (եւ գիտէք , աւա՛ղ , թէ «յաւելուած» բառը դրօշակեան Բառարանին մէջ «սքանտուլ»ի հոմանիչ է դարձած) , յաւելուած մը որ կը պարունակէ «չէզոք-միջնորդ» պ . Մխիթարին «վերջին խօսք»ը , այսինքն բացէ ի բաց միութիւնը վիճեցնել ձգտող այլանդակ գրութիւն մը :

Այդ «Յաւելուած»ին հրատարակութիւնը ոճի մըն է միութեան դէմ գործուած , ոճի մը որուն պատասխանատուութիւնը կը ծանրանայ այնքան , եւ աւելի , «Արեւմտեան բիւրօն»ին վրայ , որքան պ . Մխիթարին վրայ , որովհետեւ «Արեւմտեան բիւրօն» , ինչպէս պ . Մխիթարը , գիտէին որ այնպիսի պահու մը ուր դրօշակեանց եւ Հնչականց պաշտօնավերթելը զազրեցուցած էին իրարու դէմ յարձակողական յօդուածներու հրատարակութիւնը ,

կըր մերձեցումի հողը մեծապէս պատրաստուած եւ միութեան կարելիութիւնները բազմապատկուած էին , այդպիսի անխմատ գրգռիչ , թուհաւոր «յաւելուած»ի մը հրատարակութիւնը ոչ միայն հարկաւորաբար պիտի «պաղջուր թափէր» միութեան գործին վրայ , այլ եւ երկու կուսակցութեանց պաշտօնավերթելուն միջեւ անխուսափելի կերպով պիտի վերաբարձուէր աղէտաւոր պայքարը . միութեան մասին մինչեւ ցարդ գրած յօդուածներուս մէջ , առանց միջնորդի դեր կատարելու ո եւ է յաւակնութեան եւ առանց կատարուելիք միութենէն ինծի համար ո եւ է «աթոռ» սպասելու , կուսակցական ստելութիւնները մարել ձգտող , փոխադարձ վստահութիւնը հնուցանել ջանացող , անջատուած եւ պառակտուած տարրերն իրարու հետ անմիջական եւ ուղղակի յարաբերութեան դնելու մղող խօսքեր ըսելով շտտացած էի , զգուշանալով ծանրանալ բոլոր այն հարցերուն վրայ որոնք կ'իրքերը կ'ընային զրդուել , թիւրիմացութիւնները կ'ընային ստտկացնել , անջատու մը կ'ընային ընդլայնել : Զգուշացած էի նոյն իսկ հրատարակաւ յայտնելէ՝ իր բոլոր գորութեանը մէջ՝ զարմանքը զոր ինծի կը ներշնչէր «Արեւմտեան բիւրօն»ին անըմբռնելի կառչումը «չէզոք միջնորդ»ին , եւ զգուշացած էի նաեւ որակելէ պ . Մխիթարի «միջնորդութեան դերն» ըմբռնելու տարօրինակ եղանակը զոր մանաւանդ վերջերս իր բռնած ընթացքէն դատելով մեծապէս դատապարտելի կը նկատէի : Կ'երեւակայէի որ «Արեւմտեան բիւրօն» պիտի չուշանար գործադրութեան դնել ուղղակի բանակցութեանց սիստեմը , եւ կ'երեւակայէի մանաւանդ որ պ . Մխիթար , զոր ամէն կերպով ջանացած էի իր յիմար եւ Արփիարաշունչ նախապաշարունակելն , յամառ ու կըքստ մենամուրի մը արժանի իր կանխակալ-կարծիքներէն բուժել ու ետ կեցնել այն սխալ ու իրեն ինչպէս միութեան համար վնասակար ըլլալ սպաւնացող ճամբէն ուր կը շարունակէր ընթանալ , պիտի անսար այդ խորհուրդներուն որոնք այնքան հետեւողական էին միութեան յաջողմանը համար ունեցած բուռն փափաքիս հետ որքան այն բաղձանքին զոր ունէի իրայտուակ վերջտարութեանէ մը փրկելու իր անցեալ գործունէութեամբն ինքզինքը յարգանքի արժանի կազուցած անձ մը : Սր . Մխիթար նախընտրել է հետեւել իր հիւանդոտ անձնամուրտեան խորհուրդին ու փտութեան աղբիւրներէ բղխած թեւադրութեանց իր վերջին-խօսք»ը ամենէն անտրամաբանական , աւանդն անկապակից , ամենէն աղբեղուցիչ բըկարամտութեան ապացոյցը տուող , ամենէն անհասանելի ձեռագրելիութեան մէջ գա՛ւա վի-

ժող, ու միանգամայն ամենէն անխիղճ եւ անազնիւ գրութիւնն է զոր մարդ մը երբեք ստորագրած ըլլայ. ու հիմա ինծի համար պարտականութիւն մը կը նկատեմ, թօթափելով բոլոր վերապահումներն ու զգուշաւորութիւնները, այդ վերջին խօսք»ին ինչպէս եւ պ. Մխիթարի իբր միջնորդ կատարած բովանդակ գործունէութեանը վրայ մտածումս յայտնել:

Պ. Մխիթարի «վերջին խօսք»ը «Արեւմտեան բիւրօ»ին ուղղած իր երկայն նամակին սա կտրուկ ու ինքնատիպ վերջաբանին մէջ կ'ամփոփուի. «Անցեալ օգոստոս 1901էն ի վեր չկայ վեր. Հնչ. կուսակցութիւնը ներկայացնող պաշտօնական օրինաւոր մարմին մը, չկայ եւ ոչ իսկ (իբր կազմակերպութիւն) վեր. Հնչ. կուսակցութիւն մը որ անոր եւ ձեր միջեւ ո եւ է մէկը կարենայ միջնորդութիւն ընել, Կ'աւելցնեմ. դիտական ու փորձատու մտքի մը յատուկ չէ յուսով հասնիլ անխարուսիկ արդիւնքի մը անկազմ խմբակութեան մը կա՞ր պաշխոզուքներու հետ որոնք ի ծնէ հակամէտ են ձեւել ոչ թէ ինքզինքնին նշանակուած գործին վրայ, այլ այդ գործը իրենք իրենց վրայ:»

Պ. Մխիթարի համեմատ, ուրեմն՝ անկարելի եւ անօրու է այլ եւս միութիւնը, — եւ ասի՝ վեր. Հնչակեաններուն յանցանքովը, եւ մատուցուած ան զեր. Հնչակեան գործիչներուն որ 1901 օգոստոսէն ի վեր Հնչակեան կուսակցութիւնը փրկեցին Արփիարեանի բերած աւերումէն: Պ. Մխիթար կը զգացնէ թէ միութեան բանակցութիւնները կարելի պիտի ըլլար շարունակել թէ 1898ի պատգամաւորական ժողովէն ընտրուած վարիչները բոլորն ալ — այսինքն Արփիարեան, եւն. — գործի գլուխը մնացած ըլլային. «Երբոր, կը գրէ պ. Մխիթար, 1900ին գիմեցի վեր. Հնչ. կուսակցութեան, գիտէի թէ այդ ատենուան կեդր. վարչութեան անդամներն ի՞նչքան են, ե՞րբ եւ ի՞նչպէս ընտրուած են: Ունէի դէմս օրինաւորութեան բոլոր պայմաններուն մէջ ընտրուած եւ երկու տարիէ ի վեր պաշտօնավարող մարմին մը, իսկ հիմա ձեռքս ազատցոյցներ ունիմ թէ այդ կեդր. վարչութիւնը գոյութիւն չունի, ցրուած է, եւն. »

«Չկայ կեդրոնական վարչութիւն, կ'աւելցնէ պ. Մխիթար, այլ կայ չորս հինգ անձերէ բաղկացեալ խմբակ մը որ չկրնար համադել հայ հասարակութիւնը թէ ինքն է որ կը ներկայացնէ վեր. Հնչ. կուսակցութիւնը, կը վայելէ իր անդամներուն վստահութիւնը, կը գործադրէ կամքն ու փափաքը, քանի որ ասոնց մտքն, ժողովէն այդ խմբակը ընտրուած չէ:»

Պ. Մխիթար աւելի սուղ կ'երթայ եւ վեր. Հնչակեաններու վերջին վարիչ մարմնոյն եւ մանաւանդ պ «Վահէ»ին դէմ կ'ուղղէ այնքան ծանր որքան տխմար ամբաստանութիւններ. «Ես կը գտնուիմ ուրիմն, կ'ըսէ, հանդէպ այնպիսի մարմնի որ ընտրուած չէ, որ տարիներէ ի վեր ունեցած է պաշխոզուքներու յատուկ զարուղի ընթացք մը, ընկերներու դէմ ըմբոսս, գործերուն մէջ կամայական եւ անհաւատարիմ»: Պ Մխիթար կը յայտարարէ մասնաւորապէս թէ պ. «Վահէ» «չպատուած» եղանակով մը կատարել է եղեր 1900ին իրեն յանձնուած պաշտօնը որուն համար Պոլիս գնաց:

Վերջապէս, պ. Մխիթար երեսնս կը հանէ՝ այս տարօրինակ առջիւմանին մէջ մանրամասնութիւն մը, անհունօրէն համեղ. — պ. Մխիթար, զոր ամենքս «չէզոք» կը կարծէինք, որ ինքն իսկ ինքզինքը միշտ «չէզոք» կ'անուանէր, զոր «Արեւմտեան բիւրօ»ն այդ յաւելուածին մէջ իսկ գեղ կը յամատի «չէզոք» յորջորջել, ոչ միայն չէզոք մը չէ եղեր, այլ Հնչակեան մը, եւ Հնչակեան վարիչ մը, 1898ին պատգամաւորական ժողովէն ընտրուած «օրինաւորութեան բոլոր պայմաններուն մէջ» (!) «1898ի լնդն. ժողովէն ընտրուած չէ՝ այդ խմբակը, կը գոչէ պ. Մխիթար, ինչպէս զոր օրինակ՝ ես, վարիչ ընտրուած էիս. եւ ուրիշ տեղ մը՝ իմ արտուես գաւ, երեք վարիչներու աթոռներ ալ թափուր են հոն»:

Այս բոլորը բոլորէ մը չի զիմանար առողջ ու անկողմնակալ քննութեան մը, — եթէ պ. Մխիթար 1898ին վարիչ ընտրուած էր, կա՞մ այն է որ հրաժարականը տուած լլլալու է իսկոյն եւ այն ատեն այլ եւս վարիչ չէր ըլլար, այլ եւս «աթոռ» չէր ունենար, եւ իր տեղը անշուշտ ուրիշ մ'ընտրուած կ'ըլլար. եւ կա՞մ այն է որ ընդունած է իրեն յանձնուած պաշտօնը, եւ այն ատեն ի՞նչպէս ինքը որ Հնչակեան վարիչ մըն էր, իբրեւ «չէզոք» Դրօշակեանց եւ Հնչակեանց միջեւ բանակցութիւններու կը ձեռնարկէ: Իրողութիւնը սա է որ պ. Մխիթար ո՛չ ընդունած ո՛չ մերժած է իրեն յանձնուած պաշտօնը, պատասխան իսկ չէ տուած այն նամակին որով «օրինաւորութեան ամէն պայմաններուն մէջ ընտրուած» իր Հնչակեան պաշտօնակից վարիչներն իրեն խմբուցած էին իր վարիչ ընտրուած ըլլալը: Եւ բաւական տարօրինակ է որ պ. Մխիթար իր այս նամակին մէջ չ'ամչնայ խօսքն ընելու այդ խեղճ աթոռին՝ որուն նկատմամբ այնքան անքաղաքավար է գտնուեր, ինչպէս որ տարօրինակ է եւ տխուր, տեսնել անձ մը, որուն Հնչակեան կուսակցութիւնը իր վերին վարչութիւնը ուղեր է յանձնել, եւ որ իրեն ցոյց

տրուած գերագոյն վստահութեան այդ ապացոյցը կը փոխարինէ հիմա Հնչակեան կուսակցութիւնը վարկարեկ ընելու ջանքով մը ի հաշիւ «Արեւմտեան բիւրօ»ին . . .

Հոս արդէն հարցում մը կայ որ անխուսափելի է . —

Ինչո՞ւ պ. Մխիթար 1900ին միայն նշմարեր է յեղափոխական մարմիններու պատակաւոր աղետաւոր հետեւանքները եւ յանկարծ դուրս ելլելով այն անշարժութենէն ուր փակուած էր Պոլսէն մեկնելէն ի վեր , այդ պահուն միայն գաղափար ունեցեր է իրագործել միութիւնը որուն փափաքը ազգին կողմէ շատոնց կը յայտնուէր: Եթէ պ Մխիթար այգթան ջերմօրէն կը բազմար միութիւնը , եւ եթէ ինքզինքը կարող կը գզար այդ փափուկ ու գրծուարին գործը իր անհասական միջնորդութեամբն ի գլուխ հանելու , ինչո՞ւ չօգտուեցաւ 1898ին իրեն յանձնուած պաշտօնին ընծայած հոյակապ առիթէն , ինչո՞ւ չընդունեցաւ այդ պաշտօնը եւ իրը Հնչակեան վարիչ յասակօրէն , ուժգնօրէն չջանաց միութիւնը կատարելու , համոզելով նախ իր պաշտօնակիցները (օրինաւորութեան բոլոր պայմաններուն մէջ ընարուած) , եւ յետոյ պաշտօնապէս յանուն վեր. Հնչ. կուսակցութեան հրաւիրելով միւս կուսակցութիւնները որպէս զի բունակցին միութեան համար: Եթէ պ. Մխիթար այդպէս վարուած ըլլար , շատ աւելի հաւանական է որ իրական ծառայութիւն մը կարենար մատուցանել միութեան գործին . որովհետեւ կուսակցութեան վարիչ մը շատ աւելի հեղինակութեամբ եւ ուժով կրնայ քանդել կուսակցութեանց միջեւ գոնուող պատուարները քան զրսէն մարդ մը , որ ներքին զսպանակներուն ու կնճոռտութեանց անծանօթ է , եւ որ յաճախ (նոյն իսկ եթէ անկեղծ ըլլայ) մօտեցնել ուզած ատեն՝ աւելի կը հեռացնէ , պարզել կարծած ատեն՝ աւելի կը կնճոռտէ: Ասոր ապացոյցը պայծառօրէն տեսանք վերջերս , պ. «Վահէ» եւ իր ընկերները , ճիշդ անոր համար որ կուսակցութեան մը վարիչներ էին , եւ ոչ թէ չէզոքներ , կրցան իրագործել յեղափոխական մարմիններու միութեան գործին կէսը . այն է հին Հնչակեաններուն հետ միութիւնը , մինչդեռ պ. Մխիթար , չէզոք , երկու տարիէ ի վեր Ասաքեալներէն աւելի նամակ գրած ըլլալով հանդերձ աշխարհիս չորս կողմը , որիչ բանի չի յանդիւր ահա բայց եթէ Դրօշակեանց եւ Հնչակեանց միջեւ վիճը աւելի լայնցնելու :

Հիմա , քննենք , քիչ մը մօտէն , պ. Մխիթար ի «վերջին խօսք»ը :

1. Այդ «վերջին խօսք»ին մէջ յիշատակ-

ուած իրողութիւնները (?) եւ նկատողութիւնները ամենամեծ մասամբ՝ Արփիարեանի աղբիւրէն կը բղխին , կարելի է նոյն իսկ ըսել թէ այդ «վերջին խօսք»ը , Արփիարեան-Մխիթար աշխատակցութեան մ'արդիւնք է . եւ ասի միայն բաւական է դադափար մը աւելու համար այդ իրողութիւններուն եւ նկատողութիւններուն ճշգրտութեան եւ լրջութեան աստիճանին վրայ : Պ. Մխիթար որ այժմ Արփիարեանը կը նկատէ իբրեւ ճշմարտութեան հասնելու լաւագոյն միջոցը եւ որ անոր հետ տեսակ մը երկեակ նիւախակցութիւն\*) կազմած է՝ Հնչակեանութիւնը կործանելու «ազգասիրական» նպատակով , 1900ի յունիս23ին Անդրխայէն ինծի ուղղած մէկ նամակին մէջ նետեալը կը գ էր Արփիարեանի մասին . «Կրնաս առանց զղջումի մը երկիւղին , զստապարտել քու ներքին ատեանիդ առջեւ այս անկեանիդնայի քեքեւսօյիկը . որ միակզարեայն ունազործ մը կրնայ հաւատարիչ : Մարտ սպաննելը է՝ ն թեթեւ ոճիւրն է : ատկէ աւելին կայ : Դաւածանութիւնը հասարակ ոճիւր մըն է . ատկէ աւելին կայ :» Իսկ ըերանայի կերպով՝ ինծի , ինչպէս ուրիշ շատ անձերու , պ. Մխիթար հազար անգամ ըսած է այդ չըջանին՝ թէ Արփիարեանը ո եւ է անկեղծութեան , ո եւ է լրջութեան անկարող անձ մըն է , թէ՛ ո եւ է խօսք որ Արփիարեանին բերնէն կ'ելլէ , չի կրնար ճշմարիտ ըլլալ՝ քանի որ Արփիարեանին բերնէն կ'ելլէ : Եանկեանութենէ զուրկ չէ այստեղ յիշել նաեւ այն կարծիքը զոր այդ թուականին Արփիարեան ունէր Մխիթարի մասին . 1900ի օգոստոս 11ին ինծի գրած մէկ նամակին մէջ , Արփիարեան , խօսելով այն բանակցութեանց մասին զոր պ. Մխիթար ունեցած էր «օրինաւոր» կեդրոնին հետ նւ մասնաւորապէս այն վարմունքին մասին զոր ունեցէր էր իրեն նկատմամբ անձնապէս , հետեւեալը կ'ըսէր . «Մօտերս \*\*\* ին պիտի զրկեմ ուրիշ նամակներ ալ , ապրիլ-մայիսին ստացուած , որոնք շատ ախուր գոյնով մը պիտի լուսաւորեն Մխիթարին ընթացքը , սկսել քաղցրութեամբ , շարունակել սպառնալիքով , վերջացնել դաւադրութեամբ , ահա իր ընթացքը :» Այս երկու մարդիկը , որ իրարու վրայ այսքան սիրուն գաղափար մը ունէին ճիշտ այն պահուն ուր «օրինաւորութեան բոլոր պայմաններուն մէջ» բանակցութիւններ կը կատարէին իրարու հետ , հիմա «եղբայր եմք մեք» կ'երգեն կը անամպ համերաշխութեան

\*) Թերեւս աւելի ճիշդ ըլլայ «Երբեակ նիւախակցութիւն» ըսել , «Արեւմտեան բիւրօ»ն ալ հաշուելով :

գրկապնդումը մը մէջ : Ասկից 8-9 ամիս առաջ, Արփիարեան կ'ուզէր Մխիթարին իր անտուանալի նամակը : զոր Դրօշակեան թերթերը հրատարակեցին, եւ ուր, յայտնելէ յետոյ թէ ինքը ինքնաբերաբար (!) հրատարած էր վերահաղմեալ հնչ. կուսակցութեան վարչութեանէն եւ «Նոր Կեանք» ի խմբագրութեանէն, հետեւեալ յարգալից ու կաթողին տողերով կը դափնեպսակէր երբեմնի «դաւադիր»ը. «Միւրելի բարեկամս, կը գնահատեմ քու անկեղծ ջանքերդ միութեան համար, եւն. : » (Այդ գմայլելի առքեմանին մէջ, Արփիարեան կը մնչէր նաեւ թէ ինքը, թէպէտ վարիչի գերէն քաշուած, միշտ կը միար հաւատարիմ զինուոր մը հընչակեան բանակին», Այս «վերջին խօսք»ը ամենէն յտակ կերպով ցոյց կուտայ այն եղանակը որով Արփիարեան կը կատարէ «հաւատարիմ զինուորի» զերը հանդէպ Հնչակեան կուսակցութեան) : Եւ պ. Մխիթար, որ 1900ին «ամենախղճալի թեթեւասօլիկ» եւ «մարդասպանէն ու դաւաճանէն աւելի սոսկալի ոճրագործ» կը նկատէր Արփիարեանը, չամչցաւ անոր այդ յայտարարութիւնները լուրջ, անկեղծ եւ ճշմարիտ նկատելու եւ անոր նամակը իբրեւ կարեւորութիւն ունեցող եւ հաւատարի արժանի առքեման մը մամուլի մէջ հրատարակելու, ու հիմա նոյն Մխիթարը այդ նոյն Արփիարեանին թելադրութեանցը կը հետեւի՝ վարկարկել փորձելու համար Հնչակեան կուսակցութիւնը եւ անոր ամենէն անձնուէր գործիչներէն մին, «Վահէն», որուն նկատմամբ ինքն իսկ Մխիթար մինչեւ վեց ամիս առաջ ամենէն յարգալից, նոյն իսկ հիացական կարծիքը կը յայտնէր : — Ասի միայն բաւական է այդ «վերջին-խօսք»ին արժէքը ճշդելու համար, եւ կրնայ աւելորդ գարձընել ուրիշ ո եւ է մանրակրկիտ քննութիւն. բայց համբերութիւն ունենանք : Եւ շարունակենք այդ գրութիւնը վերլուծել «գիտնական եւ փորձառու» մաքով մը :

2. Պ. Մխիթար աւելի քան ո եւ է մէկը գիտէր ոչ միայն Արփիարեանին այլ եւ «Արփիարեան-կեդրոն»ին բոլոր թերութիւնները, եւ ոչ ք այդ թերութիւններուն վրայ խօսած է իրմ. աւելի խստութեամբ. ինչո՞ւ ուրեմն չի խոստովանիր հիմա անվիճելի ծառայութիւնը որ մատուցին Հնչակեան կուսակցութեան եւ յեղափոխական գործին ճիշդ այն մէկ քանի Հնչակեանները՝ որոնց դէմ պ. Մխիթար այժմ անաթեմա կը կարգայ՝ մաքրելով կեդրոնը, վերանորոգելով կուսակցութիւնը, եւ «Նոր Կեանք»ին տալով յեղափոխական ազդութիւն մը : Պ. Մխիթար հիմա դրեթէ

կ'աւազէ այն օրերը ուր «Արփիարեան կեդրոնը» կը փթթէր եւ չի քաշուիր յայտարարել թէ այդ նախկին կեդրոնին հետ աւելի հնարաւոր է եղեր Դրօշակեան կուսակցութեան ինչպէս եւ միջնորդի մը համար բանակցութիւններ կատարել քան թէ անոր յաջորդող կեդրոնին հետ : Պ. Մխիթար այդ գերազանցութիւնը կը գտնէ Արփիարեան-կեդրոնին 1898ի ընդհ. ժողովէն օրինաւորապէս ընտրուած ըլլալուն մէջ եւ կը կարծէ թէ այդ կեդրոնին յաջորդող խմբակութիւնը (?) ինչպէս կ'ըսէ, «յարձակմամբ դրատած է այդ աթոռները . . .» :

Պիտի շատանամ զիտել տալով թէ պ. Մխիթար այս «գիտա»ը բրաւ այն վայրկեանէն յետոյ երբ իր «պաշտպօղութե» համարած խըմբակը իրեն յայտարարեց թէ զինքն իբրեւ միջնորդ չ'ընդունիր : Անօրուս չէ այստեղ յեղել թէ այդ բոպէէն առաջ իր զիրքն արդէն մէկէ աւելի անգամներ փոխուած է Վեր. Հնչակեաններուն թէ՛ նախկին (օրինաւոր) եւ թէ՛ վերջին («ոչ-օրինաւոր» համարուած) կեդրոններուն հանդէպ : 1900ին երբ առաջին անգամ յարաբերութեան մտաւ՝ իբրեւ միջնորդ՝ «օրինաւոր» կեդրոնին անգամներուն հետ, պ. Մխիթար այդ կեդրոնին հետ կարելի նկատեց միութեան բանակցութիւն կատարել, յետոյ երբ պայտանները փոխուեցան, երբ Մխիթարի եւ Արփարի յարաբերութիւնները խլուեցան, երբ Արփիարեան եւ իր պաշտօնակիցները մերժեցին միութեան պայտաններու այն ձեւը զոր պ. Մխիթար կ'առաջարկէր, պ. Մխիթար հետու էր այդ պահուն այնքան մեծ հիացում մը պահած ըլլալէ այդ «օրինաւոր» կեդրոնին վրայ, միայն թէ՛ բանակցութիւնները բոլորովին խզուած ըլլալով հանդերձ, պ. Մխիթար չեմ գիտեր ինչո՞ւ այդ միջոցին ո եւ է «վերջին խօսք» չուզուց Արեւմտեան բերքին, տարի մը ամբողջ լուութիւն պահելով եւ ըստպասցնելով այդ անորոշութեան մէջ Դրօշակեան կուսակցութիւնը, որ՝ իբրաւ է թէ՛ զըժպոճ ըլլալու ձեւ չունէր այդ սպասումի յակրժացումէն : Երբ Արփիարեանի վտարմամբ կուսակցութեան ղեկը յանձնուեցաւ նոր կեդրոնին, պ. Մխիթար նախ մեծ համակրութեամբ վարուեցաւ այդ կեդրոնին նկատմամբ, անոր զիմեց՝ բանակցութիւնները վերսկսելու համար, եւ «Հայրենիք»ին զրկած իր յօդուածին մէջ գնահատեց այդ նոր կեդրոնին կատարած գործը, այսինքն Արփիարեանին հետացումը եւ «Նոր Կեանք»ի ուղղութեան բարեփոխումը. բայց այն բոպէին ուր այդ նոր կեդրոնը իրեն յտակօրէն յա տարարեց թէ զինքն իբրեւ «չէզոք-միջնորդ» չ'ընդունիր : Պ. Մխիթար յանկարծ յայտնութիւնը ունեցաւ այդ կեդրոնը

նին «ապօրինի» եւ «պաշիպօղո՛ք» ըլլալուն<sup>\*)</sup> : Այդ ապօրինութեան հարցէն առաջ, պ. Մխիթար պահ մը ուրիշ եզանակ մը որոշած էր նուազել՝ նոր կեդրոնին հետ բանակցութեանց անկարելիութիւնը փաստելու եւ իր միջնորդի դերին վիժումը պարակելու համար, — այն է կարծել առ հասարակութեան թէ նոր կեդրոնը «միութիւն չուզեր» միութեան կողմը արձակելու կատակերգութիւնը խաղալով հանդերձ, իր այդ կարծիքը (զոր գրաւոր ալ հազորդած է ինծի), կը հիմնէր օգային ենթագրութիւններու եւ խեղաթիւրուած եւ արդէն ինքնին աննշան ու անիմաստ քանի մը կտորփրթուած տեղեկութեանց վրայ : Հին Հնչակեաններուն հետ միութեան յաջողումը, որ ապացուցուց թէ պ. Մխիթարին այդ «պաշիպօղուք» եւ միութիւն չուզող» կարծած կեդրոնը շատ կարգապահ, լուրջ, իր խոստացածը առանց ազմուկի եւ մինչեւ ծայրը կատարող, ու միութիւնը ոչ միայն բաղձացող այլ եւ

զայն իրականացնել գիտցող մարմին մըն էր, պ. Մխիթարը ստիպեց «միութիւն չուզելու» ամբաստանութիւնը հրապարակ նետելէ վաղ անցնելու, եւ այն ատեն է որ «ապօրինութեան» հեքեաթին կառչելու ստիպուեցաւ : Այդ նոր կեդրոնին օրինաւոր կամ ապօրինի ըլլալը միմիայն Հնչակեան կուսակցութեան անդամներուն զիտնալու բանն էր, եւ Հնչակեան կուսակցութեան անդամները, որ միաձայն հաւանութեամբ եւ անսահման վստահութեամբ յանձնեցին այդ կեդրոնին՝ հին հընչակեաններու հետ բանակցութիւնները վարելու պատկառելի եւ ամենափափուկ գործը, շատ լաւ գիտէին անոր կատարելապէս «օրինաւոր» ըլլալը : Պ. Մխիթար ո եւ է իրաւունք չունէր կուսակցութեան մը կեդրոնէն բացատրութիւն պահանջել իր ներքին կազմակերպութեանը մասին, երբ մանաւանդ այդ կեդրոնը իրեն յայտարարած էր թէ վինքն իրբեւ միջնորդ չ'ընդունիր : Այն նամակը որով

\*) Ես անձամբ ներկայ գտնուած եմ՝ պ. Մխիթարի խնդրանքով՝ այն տեսակցութեան որու մէջ յանուն վեր. Հնչակեան կուսակցութեան պ. Վահէ յայտարարեց պ. Մխիթարին թէ վեր. Հնչ. կուսակցութիւնը որոշած է ո եւ է միջնորդ չընդունիր միութեան բանակցութեանը, բայց թէ պատճառն էր բանակցիչ պ. Միխայիլին հետ երբեք պ. Մխիթար ներկայանայ իր Գրոշակեան կուսակցութեան կողմէ կարգուած պաշտօնակալն քանակցող : Պ. Մխիթար մեկնեցաւ սաստիկ զժգոն այս յայտարարութենէն որ սակայն շատ արամբարանական էր եւ բնաւ երբէք վերաւորիչ, եւ որ բանակցութիւնները չէզօք միջնորդի մը ձեռքը ձգելու սկզբունքով կարելիութիւնը ջնջելու : Այդ օրէն յետոյ, պ. Մխիթար մէկ քանի հեղ փափաքեցաւ զիս տեսնել, եւ պնդեց որ համոզեմ պ. Վահէն որպէս զի անպատճառ զինքը ընդունին իբր միջնորդ (պ. Մխիթար կը յամտէր եւ մինչեւ հիմա կը յամտի կարծել թէ պ. Վահէ տեսակ մը զիկատարող է Հնչակեան կուսակցութեան մէջ՝ ինչպէս ինքը կ'ուզէր զիկատարող-միջնորդ մ'ըլլալ, եւ թէ անոր անհատական որոշումէն կախում ունէր իր միջնորդ մնալը կամ չմնալը) : Բացատրեցի ինքն թէ ոչինչ կրնայի ընել Հնչ. կուսակցութեան որոշումը փոխելու համար, թէ արդէն ես իսկ համոզուած էի որ ուղղակի բանակցութեանց սիստեմը լաւազայն էր միութեան յաջողմանը տեսակէտով եւ յայտնեցի իրեն որ ամենէն հայրենասիրական, ամենէն ազնիւ եւ ամենէն ուշիմ ընթացքն ունեցած եւ միութեան շարժին ամենն իրական ծառայութիւնը մատուցած պիտի ըլլար եթէ քաջուէր, ու հաղորդելով Գրոշակե-

աններուն՝ Հնչակեանց որոշումը, խորհուրդ տար անոնց որ ընդունէին ուղղակի բանակցութեանց գրութիւնը : Բուն կատարութեան նուազով մը կա-կարծիք կարած, «Այդպէ՛ս ուրեմն, գոչեց պ. Մխիթար, Վահէն չ'ուզէր ինծի հետ գործ ունենալ, ուրեմն կա՛մ ես պիտի կործանեմ զինքը կամ ան զիս պիտի կործանէ», ու ատանց ձեռքս սեղմելու ելաւ : Գնաց, զիս սահմրկած թողլով հաշտարարի, միացնողի դիմակին տակէն յանկարծ գուրս ցատքող այդ անակընկալ ու զաւեչտական փեկլիվանին յայտնութենէն : Այն ատեն հասկցայ որ այդ մարդուն զօռով-միջնորդի այդ անբացատրելի մոլեգնութեանը մէջ հիւանդոտ, վրայվիչ, առեղծուածային բան մը կար : Անկից յետոյ, սկսաւ նամակներու տարափ մը տեղալ իմ վրաս, պ. «Վահէ»ին վրան (հակառակ որ իրմէ խնդրած էի այլ եւս ոչինչ չգրել պ. Վահէին որ, շատ ծանրօրէն հիւանդ, պարտաւոր էր, բժշկին խորհրդով, ո եւ է զրգուտէ գերծ բացարձակ հանդիստի կեանք մը անցընել ատեն մը) : Այդ նամակներէն ոմանք սիրալիւր էին, ոմանք ըստպատճառ, երբեմն ալ սպառնական ու սուրալի միանգամայն, միեւնոյն նամակին մէջ պ. Մխիթար մեղ իր տունը ճաշի կը հրաւիրէր որպէս զի դարձեալ այդ խնդիրներուն վրայ խօսէինք (եւ որպէս զի պ. Վահէն զինքն իրբեւ միջնորդ ընդունէր) եւ միանգամայն կ'ըստպատճառ որ եթէ ճաշի չեթաշինք՝ մեր հոգիին ամբողջ սեւութիւնը, մեր ամբողջ պաշտօնը պատկառութիւնը՝ երեւան պիտի հանէր... Ամիսներ սպասելէ յետոյ, տեսնելով որ իր նամակագրական ամբողջ տաղանդը ապարդիւն կը մնար, պ. Մխիթար որոշեւ է վերջապէս իր զվերջին խօսքը արձակելու :

պ. Մխիթար այդ կեզրոնէն այգպիսի բացա-  
արու թիւններ կը պահանջէ, այնքան ծիծա-  
ղելի է որքան անիմաստ : Ի՞նչ պիտի բռնին  
Դրօշակեանները եթէ յանկարծ չէզոք անհաս  
մը ելլէր Սրբեմանան բիւրօին դիմէր եւ պա-  
հանջէր որ, միութեան բանակցութիւնները  
սկսելու համար, իրեն հաղորդէին իրենց ան-  
զամեքուն ընտրութեան թուականը, պայ-  
մանները, եւն. : Վեր. հնչակեան կեզրոնը  
ամենէն «գիտական» եւ ամենէն «փորձառու»  
մաքին ապացոյցը տուեր է անպատասխան Թող-  
լով այգպիսի անհարկէ նամակ մը :

3. Պ. Մխիթար կը յայտարարէ թէ պ. «Վահէ»  
«չսպասուած» եղանակով մը կատարել է եղբր  
1900ին Պոլիս իրեն յանձնուած պաշտօնը :  
Չեմ գիտեր թէ պ. Մխիթար ի՞նչ կը սպասէր  
պ. «Վահէ»էն, բայց ամենուն յայտնի է թէ  
«Վահէ»ին Պոլիս երթալէն ի վեր է որ վեր-  
հնչակեան կուսակցութիւնը վերանորոգուեցաւ  
— եւ բոլոր Հնչակեանները երախտադէտ են  
այդ անկեղծ ու քաջ յեղափոխականին որ իր  
վրայ դրուած յոյսերը լիովին վարձատրեց՝ իր  
կեանքը վտանգելով ասոր համար : Արդէն ա-  
ւելորդ կը համարիմ ասոր վրայ ծանրանալ .  
նախատած պիտի ըլլայի պ. «Վահէ»ն՝ զինքը  
ո եւ է պաշտպանութեան կարօտ նկատելով :

4. Պ. Մխիթար իր այս «վերջին խօսք»ին  
մէջ բառ մը չ'ըսեր վեր. եւ հին Հնչակեանց  
միութեան վրայ, եւ ասի տարօրինապէս նշա-  
նակալից է : Պ. Մխիթար, որ երկու տարիէ ի  
վեր ինքզինքը միութեան գործին նուիրած է,  
եւրբեք չէ զբաղած հին Հնչակեաններով, եւ սա-  
կայն անձի մը համար որ կ'ուզէր յեղափոխա-  
կան տարրերը միացնել, էական պարտակա-  
նութիւն մըն էր յարաբերութեան մտնել յե-  
ղափոխական բնոր հատուածներուն հետ եւ  
չանալ զանոնք բոլորն ալ միացնել : Ինչ շըն-  
չակեանները ունէին աշխարհիս այլ եւ այլ  
կէտերուն վրայ խումբեր որոնք զուրկ չէին  
նշանակութենէ, եւ անհատականութիւններ  
որոնք մեծ պեր կատարած էին Հնչակեան կու-  
սակցութեան փայլուն շրջանին, այդ հին շըն-  
չակեանները միշտ կը շարունակէին իրենց  
օրկանը, «Հնչակ»ը, հրատարակել : Պ. Մխի-  
թար երկվայրկեան մը չէ մտածած իր միջ-  
նորդութեան բարիքն անոնց ալ վայելել տալ .  
եւ ասիկա շատ զարմանալի է : Ութը-ինը  
ամիսէ ի վեր, վեր. Հնչակեանները բանակցու-  
թիւններ կը սկսէին հին Հնչակեաններուն  
հետ, պ. Մխիթար կը շարունակէր անտարբեր  
մնալ այդ երեւոյթին : Իր միակ փափաքն էր  
միշտ վեր Հնչակեաններուն եւ Դրօշակեան-  
ներուն միջեւ միջնորդի դերը կատարել իր  
ուզած եղանակովը, այսինքն իբրև զիկատ-

տոր : Վեր. եւ հին Հնչակեանները իրենց բա-  
նակցութիւնները կ'աւարտեն, կը միանան,  
երկու կեզրոնները կը հրաժարին, նոր եւ մի-  
տցեալ կեզրոն մը ընտրելու կը պատրաստուին  
ամբողջ կուսակցութեան քուէովը : Պ. Մխի-  
թար կը շարունակէ նշանակութիւն չընծայել  
այս ամենակարեւոր դէպքին, որ իր միացնողի  
սիրտը ուրախութեամբ պէտք էր լեցնէր՝ եթէ  
իր նպատակն ըլլար իրօք յեղափոխական  
տարրերու միացումը : Ու ոչ միայն պ. Մխի-  
թար անտարբեր կը մնայ այս երեւոյթին առ-  
ջեւ, այլ ճիշդ այդ մ ջոցիւն «Արեւմտեան  
բերօ»ին կ'ելլէ զրկել իր «վերջին խօսք»ը,  
ուր կը ճգնի փաստել ապօրինութիւնը կեղ-  
րոնի մը որ այլեւս գոյութիւն չունի եւ սր իր  
օրինաւորութեան, կարգապահութեան եւ ան-  
կեղծ միութեանականութեան ապացոյցը վերջ-  
նականապէս տուած է՝ հնչակեան միացումը ի  
յանգ հանելով : Չեմ կրնար երեւակայել աս ելի  
ծիծաղաշարժ կացութիւն մը քան այն ուր պ.  
Մխիթար ինքզինքը դրաւ այս անբացատրելի  
արարքով : Ոչ ոք կրնայ ձեր այս ըմբոստու-  
թեան եւ հերձուածին մէջ զձեզ ճանչնալ իբր  
վեր. հնչ. կուսակցութեան պատմական մար-  
մինը եւ ձեզի հետ բանակցել, կը գոչէ պ. Մխի-  
թար իր «վերջին խօսք»ին մէջ՝ ուղղուելով  
«պաշը-պօղուք» կեզրոնին, եւ ճիշդ այն մի-  
ջոցին հին Հնչակեանները, այսինքն իրենց մէջ՝  
կուսած, յեղափոխութիւնը գործնականապէս  
ապրած, եւ վերջապէս կաղմակերպութիւն մը  
նեղկայացնող ամբողջ հայ որմիջներու խումբ  
մը պ. Մխիթարի այս հաստատումը զբաղանա-  
պէս կը հերքէ՝ ճանչնալով այդ կեզրոնը իբրև  
վեր. հնչ. կուսակցութեան օրինաւոր կեզրոնը,  
ու բանակցելով անոր հետ : «Չկայ կեզրոնա-  
կան վարչութիւն, կը բացապանչէ պ. Մխիթար,  
այլ կայ չորս հինգ անձերէ բազկացեալ խմբակ  
մը որ չի կրնար համոզել, հայ հասարակու-  
թիւնը թէ ինքն է որ կը ներկայացնէ վեր-  
հնչ. կուսակցութիւնը, կը վայելէ անոր ան-  
զամեքուն վստահութիւնը, կը պորձապիւ  
կամքն սւ փափաքը » : Արդ, ճիշդ այդ պահուն  
է որ պ. Մխիթարին այսքան սեւ երեւոյող  
կեզրոնը կը կատարէ ամենէն գեղեցիկ գործը  
զոր վեր. Հնչակեանները կատարած ըլլան վեց  
տարիէ ի վեր, եւ կը կատարէ զայն ամբողջ  
կուսակցութեան կամքովը ու վայելելով ամ-  
բողջ կուսակցութեան բացարձակ վստահու-  
թիւնը (ուրիշ կերպով անկարելի էր որ յաջո-  
ղէին միութիւնն ի կատար հանել) : «Չկայ,  
կը գոչէ՝ վերջապէս պ. Մխիթար, վեր. հնչ.  
կուսակցութիւն մը» !? Եւ ճիշդ այդ միջոցին  
վեր. հնչ. կուսակցութիւնը ոչ միայն իր գոյու-  
թիւնը կ'ապացուցանէ գործով — որովհետեւ

հնչակեան միութիւնը, որուն նախածնունդը թիւնը ունեցան վեր. Հնչակեանները, գործ մըն է որ պիտի մեծապէս, զիւրացնէ Բուն Գործին կատարումը, — այլ եւ կը վերսկենդանացնէ՝ աջակցութեամբ հին Հնչակեաններուն՝ նախկին հնչակեան կուսակցութիւնը՝ միացած ու իր առաջին քայլէն իսկ այնքան հզօր որքան իր լաւագոյն օրերուն (Պոսթոնի եւ Փրովիանսի հանդէսներուն մէջ երեւան եկած անօրինակ խանդավառութիւնը կը բաւէ ատի ապացուցանելու. ինչպէս եւ ապացուցանելու այն բոլոր սէրը, վատաբուծիւնը եւ երախտագրութիւնը զոր բոլոր Հնչակեաններն ունին անոնց նկատմամբ: որ այս վերանորոգումը կատարեցին:

Ինչո՞ւ, ինչո՞ւ պ. Մխիթարի «ղիտական եւ փորձառու» միայր չի նշմարեր այս «արդիւնքը», որ լիովին «անխաբուսիկ» է սակայն:

Այս «ինչու»ին պատասխանը, հիմա, ինծի դժուար չի թուեր գտնել: — Շատ հաւանական է որ, պ. Մխիթարի նպատակն էր գրոշակեան կուսակցութեան մէջ ձուլել վեր. հնչակեան կուսակցութիւնը: իր միութեան ծրագրին պայմանները զոր Պոսթոնի «Հայրենիք»ին մէջ հրատարակեց վերջերս, կասկած չեն թողուր այդ մասին. պ. Մխիթար այդ պայմաններուն կարեւորագոյններէն մին կը նկատէ այն որ միացեալ կուսակցութիւնն իրեն միակ օրկան ունենայ «Գրոշակ»ը. այդ պայմանը բացատրելու համար, ինքը կ'առարկէ թէ «Հնչակ»ը «անհատի մը սեփականութիւնը դարձած ըլլալով», եւ «Նոր կեանք» ու «Մարտ» անուններն ալ Եւրոպայի մէջ զեռ հեղինակութիւն մը ստացած չըլլալով, պէտք էր ընտրել «Գրոշակ» անունը եւ անոր շուրջը խըմբուրել: Այս փաստարանութիւնը խախտու էր: Նախ Հնչակեանները որ այսօր «Հնչակ»ը իրենց ամբողջ կուսակցութեան օրկանը դարձուցին, ապացուցին թէ այդ թերթը կրնար անձի մը սեփականութիւնը համարուելէ դադարել: Ասկից դատ, արդէն ինքնին, այդ պայմանը անընդունելի ու անհրաժեշտակալ էր. Հընչակեաններէն անկարելի էր պահանջել որ խմբուրն այն թերթին շուրջը որ իրենց կուսակցութիւնը ջախջախել, վարկաբեկել ձգտող յօգուածներ հրատարակած է սարխելէ ի վեր: «Գրոշակ»ին շուրջը հաւաքուելով Հնչակեանները «Գրոշակեան» դարձած պիտի ըլլային: Միացում մը չէ ըլլար այդպէսով այլ Հնչակեանց ձուլումը Գրոշակեաններուն մէջ. ասի անվիճելի է: Այս պատճառով է որ պ. Մխիթար երբեք չէ դրադած հին Հնչակեաններով, որոնք իբր օրկան ունէին միշտ «Հնչակ»ը. (անուն մը որ այնքան — եւ աւելի — պատմական է

որքան «Գրոշակ»ը), որովհետեւ այդ պարագային «Գրոշակ»ը միացեալ կուսակցութեան իրերեւ միակ օրկան ընդունել տալու համար պ. Մխիթարի փաստարանութիւնը պիտի քայքայուէր: Վեր. Հնչակեանները, «Արեւմտեան բլուր»ին 1901 նոյ. 23ին իրենց զրգած պաշտօնական նամակին մէջ միութեան բանակցութեանց համար իրենց ծրագիրը պարզելով, կ'առ ոջ արկէին՝ շատ աւելի տրամաբանօրէն որ «Հնչակ», «Նոր կեանք» եւ «Գրոշակ» անուններուն անդ նոր անուն մը ընտրուէր միացեալ նոր կուսակցութեան օրկանին համար, որ արդէն պիտի ունենար նոր ընտրուած կեդրոն մը, պիտի բանար նոր թուական մը հայ յեղափոխական գործունէութեան մէջ:

Կը փութամ յայտնելու թէ պ. Մխիթարի այդ ծրագիրն ինքնին զատապարտելի չեմ գտնիր բնաւ երբեք: Պ Մխիթար, Գրոշակեան կուսակցութեան համակրող, քննադատելի չէր կրնար ըլլալ՝ մտածելով թէ լաւագոյն էր Հնչակեանները ձուլել Գրոշակեան կուսակցութեան քան թէ միացած կուսակցութիւն մը կազմել նոր անունով: Դատապարտելին, պ. Մխիթարի ընթացքին մէջ, իր այդ ծրագրին գործադրութեան ջանքերուն մէջ անկեղծ, ուղղամիտ, անսքող եւ պարզ եղած չըլլալն է: Երբ ժընեվէն փարիզ եկաւ 1900ին, փոխանակ «Վենետիկէն կուզամ կոր» ըսելու, (ստուութիւն մը որ ոչ միայն «ապօրինի» էր ինչպէս ամէն ստութիւն, այլ եւ խորագէտ անխառն, փոխանակ՝ միութեան միջնորդի գերն ստանձնած ըլլալը չյայտնելով՝ մասնակի, սքողեալ, կրակատար եւ իրար հակասող զանազան խորհուրդներ տալու, զանազան թեւադրութիւններ ընելու, զանազան արարքներ ձեռնարկելու, պ. Մխիթար պէտք էր բացէ ի բաց ըսէր թէ՛ հնչակեան կեդրոնին եւ թէ՛ այն անկախ գործիչներուն որոնց հետ բանակցեցաւ, կամ սրունց գործակցութիւնը խնդրեց այս կամ այն ձեռնարկին մէջ, պէտք էր ըսէր պայծառօրէն թէ իր նպատակն էր ձուլել հնչակեանները Գրոշակեան կուսակցութեան մէջ՝ «Գրոշակ»ը պաշտօնական օրկանն ընելով բոլոր Հնչակեաններուն եւ Գրոշակեաններուն: Իր ծրագիրը յաջողէր կամ չյաջողէր, պ. Մխիթարի ճիգը ռեւէ քննադատելի նկարագրէր պիտի չունենար եւ իր անյաջողութիւնը ու եւէ անխառն կամ ծրածաղելի հանգամանքէ վերք պիտի մնար: Այն մասնաւորապէս թաքթիւրով զոր ընդդրկեց՝ յանդեցաւ ոչ միայն անյաջողութեան՝ ինչ որ այս պայմաններուն մէջ բոլորովին անխուսափելի էր, այլ եւ անձնական աննախանձելի գիրքի մը:

իր այս ընթացքը, վերջին մասին մէջ մանաւանդ, մէկ օգուտ մ'ունեցաւ, անուղղակի, եւ իր սպասածին ճիշդ հակառակը: Հընչակեանութիւնը վարկաբեկ ընելու եւ Հընչակեանները իրենք իրենց մէջ պտտակտելու իր ջանքը՝ որ վերջնական պայծառութեամբ մը կ'ապացուցուի իր «վերջին խօսք»ին մէջ, աւելի զօրացուց անոնց միութիւնը, զանոնք աւելի սեղմեց իրարու մօտ, մտրակեց անոնց սէրը դէպ ի իրենց հին մայր-կուսակցութիւնը եւ անոնց խանդը դէպ ի գործը: Ինչ ալ գրէ այսուհետեւ պ. Մխիթար, ինչ ալ ընէ իր պայքարը շարունակելու համար, Հնչակեանները պիտի երկվայրկեան մը Բկորսնցներն իր մով զբաղելով, եւ իրեն, ինչպէս եւ իրեն պէտքերուն ուրիշ կերպով պիտի չպտտասիրանեն բայց եթէ աւելի հզօրացէս սեղմելով իրենց միութեան կապերը, իրենց համակիրներուն թիւը բազմապատկելով, եւ գործելով:

Եթէ կայ բան մը աւելի անտարամբանական քան պ. Մխիթարի «վերջին խօսք»ը, այն ալ «Արեւմտեան բիւրօ»ին գայն «Դրօշակ»ին մէջ իբրեւ պաշտօնական գրութիւն մը հրատարակած ըլլալն է: Թէպէտեւ «Դրօշակ»ի խմբագրութիւնը այդ «վերջին խօսք»ին պաշտօնակութեանը մասին կարծիք մը չի յայտնիր ու պ. Մխիթարի եզրակացութեանը հետեւելով «այլեւս ամէն բանակցութիւն անկարելի է» չի յայտարարիր, թէպէտեւ այդ «վերջին խօսք»ին հետ կը հրատարակէ նաեւ վերջնականաց «պաշտօնագրուք» կեդրոնին Հնչակեան Միութիւնը ծանուցանող նամակը եւ կը յայտարարէ թէ «Արեւմտեան բիւրօ»ն սպասում է միացեալ հնչակեան կուսակցութեան նոր կեդրոնի կազմուելուն» եւ նոյն իսկ «ապագայ բանակցութեանց» կարելիութիւնը կ'ընդունի: Բայց իր դիրքը կը մնայ տարօրինակ քանակցութեանց» խօսքը կ'ընէ առանց «ուղղակի բանակցութեանց» սկզբունքն ընդգրկած ըլլալը որոշապէս յայտնելու եւ այդ արդէն տարտամ յայտարարութիւնը աւելի կասկածելի եւ թունաւոր կը կացուցանէ «երկու խօսք»ով մը որ անուղղակի հաստատումն ըլլալ կը թուի պ. Մխիթարի «վերջին խօսք»ին: Ոչինչ կարելի է գտնել, արդարեւ, բացատրելու, արդարացնելու համար «Արեւմտեան բիւրօ»ին կողմէ այդ «վերջին խօսք»ին հիւրընկալութիւնը ինչպէս եւ «երկու խօսք»ին հրատարակութիւնը: Ի՞նչ բան կը պարտաւորէր «Արեւմտեան բիւրօ»ն հրատարակելու պ. Մխիթարի

«վերջին խօսք»ը: Ի՞նչ նշանակութիւն կրնար ունենալ այլեւս, Դրօշակեաններուն, Հնչակեաններուն ինչպէս չէզոքներուն համար, վերջին կամ վերջին խօսքը մարդու մը որ այլ եւս միջնորդ չէր, քանի որ վերջնականները ջյ միայն պ. Մխիթարին անձնապէս յայտնած էին գայն: այլ եւ «Արեւմտեան բիւրօ»ին պաշտօնապէս ծանուցած էին որ ուրիշ անձ իբր միջնորդ չեն ճանչնար: պ. Մխիթար, դադարելով միջնորդ մը ըլլալէ, այլ եւս իր կարծիքը ամէն նշանակութիւն կը կորսնցնէ, բաց իայն պարագայէն ուր տրեւմտեան բիւրօն պ. Մխիթարի յանձնած ըլլար ոչ թէ միջնորդի, այլ լրագրի (աւելի ծանր բառ մը չգործածելու համար) պաշտօն մը: արդ նոյն իսկ այդ պարագային մէջ, «Արեւմտեան բիւրօ»ն աւելի խելացի բան մ'ըրած պիտի ըլլար եթէ այդ «սեղմեցնող» իր «արխիվ»ներու հաւաքածուին մէջ պահած ըլլար, փոխանակ գայն պաշտօնական յայտարարութեան մը կցելով Հնչակեան կուսակցութիւնը վարկաբեկ ճշգրտող, Միութիւնը անկարելի դարձնել ջանալող գրութեան մը իր հովանաւորութիւնը հրապարակաւ շնորհելու: Պ. Մխիթար ազատ էր, եւ իրաւունք ունէր, իր այդ գրութիւնը հրատարակելու ուրիշ անկախ թերթի մէջ իբրեւ իր անձնական կարծիքը Հնչակեաններուն վրայ, բայց այն միակ թերթը որ ոչ միայն իրաւունք չուներ հրատարակելու, այլ եւ պարտականութիւն ունէր գայն չհրատարակելու, «Դրօշակ»ն էր, սրովհետեւ «Արեւմտեան բիւրօ»ն կը զգար անշուշտ որ այդպիսի հրատարակութիւն մը մերձեցնող հանգամանք մը չուներ: Ի՞նչ պիտի մտածէր «Արեւմտեան բիւրօ»ն եթէ Հնչակեաններն ալ Դրօշակեանները ուղղակի բանակցութեանց հրաւիրելու միջոցին յանկարծ հրատարակէին չէզոքի մը կարծիքը Դրօշակեանց ներքին կազմակերպութեան թերութիւններուն, այսինչ, կամ այն ինչ Դրօշակեանին վերագրուած ենթագրական յանցանքներու, «Արեւմտեան բիւրօ»ին արինաւոր կամ ապօրինի ընտրութեանը մասին: Եւ ի՞նչպէս մանաւանդ «Արեւմտեան բիւրօ»ն չէ նկատած տարօրինակ անյարմարութիւնն այն վայրկեանին ուր այդ «վերջին խօսք»ը կը հրատարակուէր, «վերջին խօսք» մը որ կը զտափետէ վերջնչ, կուսակցութեան վերջին կեդրոնը որ գոյութիւն ունենալէ գաղթած է այլ եւս եւ որմով այլեւս բացարձակապէս աննիւստ է զբաղեցնել հասարակութիւնը: «Արեւմտեան բիւրօ»ն իր «երկու խօսք»ին մէջ «Նոր կեանք»ին կը մեղադրէ, անխրաւարբ, անմտած յոխորտանքներու յայտարարութիւնքեր, բան մը կայ սակայն դոր «Արեւմտեան

բ/ւ/րօն չի կրնար մեղադրել «Նոր կեանք»ին, եւ զոր Հնչակեանները իրաւունք ունին մեղադրելու «Արեւմտեան բիւրօ»ին: 1900ի Օգոստոսէն ի վեր, վերանորոգուած «Նոր կեանք»ին մէջ — եւ Դրօշակեանները այս շրջանը միայն նկատողութեան առնելու պարտաւոր են, — «արեւմտեան բիւրօ»ն տող մը չի կրնար ցոյց առնոր դրօշակեան կուսակցութեան ներքին գործերուն, կազմակերպութեանը անհարկի եւ նենգաւոր դատաւարութեանը պարունակէ կամ յակասէ յանուանէ յիշուած դրօշակեան գործիչներու գէժ անուանորկողական յարձակումներ՝ այնպէս ինչպէս կը գրուենք «Դրօշակ»ին կողմէ պաշտօնապէս հրատարակուած այս «վերջին խօսք»ին մէջ: Բոլոր այս նկատողութիւններէն դուրս, արդէն կայ ուրիշ շատ կարեւոր կէտ մը դիտելիք: Ինչպէս դրօշակեան կուսակցութիւնն իր օրկանին մէջ կը հրատարակէ գրութիւն մը որ քսան փարսախէն Արփիարեան կը հոտի. դրօշակեան կուսակցութիւնը, որ տարիներէ ի վեր յեղափոխական ասպարէզէն արտաքսուած կը փափաքէր Արփիարեանին, ինչպէս՝ փոխանակ շնորհապարտ ըլլալու այն հնչակեան կեդրոնին որ այդ մաքրագործումը կատարեց, իր օրկանին մէջ կը հրատարակէ հիմադրութիւն մը որ — Դրօշակեանները գիտնին ատիկա(1) — Արփիարեանին ուղղակի թեյադրութեամբ խմբագրուած է, եւ որ ցետեղուած արժանի փորձը կ'ընէ ճիշդ այն հնչակեան կեդրոնը որուն նկատմամբ Դրօշակեանները, եթէ իրօք հետեւողական» ըլլային, ամենախորին յարգանք ունենալու էին:

Այսպէս վարուելէ յետոյ, ամբողջական կը դառնամ որ «արեւմտեան բիւրօ»ն խօսի իր «բուրձնային ջրանոցներէն վրայ համաձայնութեան գալու յեղափոխական մաքուր տարրերի հետ», իր անհրաժեշտ վերապահումներին եւ հասկանալի յապաղումներին» վրայ: «Արեւմտեան բիւրօ»ն ստիպուած է խոստովանիլ որ պ. Մխիթարի «վերջին խօսք»ին հրատարակումը բաւական զարմանալի «ջանք» մըն է Հնչակեաններուն հետ համաձայնելու համար. դալով իր յապա-

ղումներուն, բնաւ երբեք հասկանալի չեն այն օրէն ի վեր որ վեր Հնչակեանները պաշտօնապէս յայտարարեցին «Արեւմտեան բիւրօ»ին թէ պ. Մխիթարը իրբեւ միջնորդ չեն ճանչնար եւ կ'ուզենք ուղղակի բանակցել Դրօշակեանց հետ. եթէ «անպայման համակրող են բոլոր յեղափոխական նկարագիր ունեցող ուժերի համախմբման», ինչպէս կը գրեն իբրեւնց «երկու խօսք»ին մէջ, Դրօշակեանները վեր Հնչակեաններուն այդ յայտարարութեան հետեւեալ օրն իսկ պէտք էր ընդունէին ուղղակի բանակցութեանց սկզբունքը եւ զայն փոսթային գործադրել (որովհետեւ միութեան անպայման համակրողը պէտք է բնականաբար անհամբեր ըլլալ զայն իսկոյն իրագործելու): Իսկ եթէ «յեղափոխական նկարագիր ունեցող» եւ «յեղափոխական մաքուր տարր» չէին համար իր Հնչակեանները, կամ մասնաւորապէս վեր Հնչակեանց վերջին կեդրոնը եւ աւոր համար է որ կը յապաղէին ու կը վարանէին, լաւագոյն էր որ փոխանակ յապաղելու եւ վարանելու՝ ատի բաց է թաց յայտարարած ըլլային, վերջ մը գնելով այս միութեան խնդրոյն նկատուցիչ եւ վնասակար յաւերժացմանը վերջ մը, որ թէպէտ ժխտական նախընտրելի պիտի ըլլար, քան այս անորոշ ու թունաւոր ճիգաձողումը: Բայց այդպիսի յայտարարութիւն մը բաւական անհեթեթ պիտի ըլլար, քանի որ այն Դրօշակեանները որ հաւանեցան բանակցութեան մտնել Արփիարեան-կեդրոնին հետ, որ ըստ իրենց, ու եւ յեղափոխական մաքուր տարր չէր պարունակեր, որուն բոլոր անպաւնդներուն անձին ղէմ ամենէն անաւոր ամբաստանութիւնները հրատարակած են, չեն կրնար հիմա յեղափոխական ոգիէ զուրկ եւ անմաքուր» հռչակել կեդրոն մը որ, իրենց «Շարժում»ին եւ «Հայրենիք»ին իսկ անկեղծութեան վայրկեաններուն մէջ ըրած խոստովանութեամբ, իր յեղափոխական ոգին ապաւնուցուց հնչակեան կուսակցութիւնը մաքրելով յեղափոխական ոգի չունեցողներէն:

Կայ միայն կէտ մը այդ «երկու խօսք»ին մէջ զոր բնական կը գտնեմ այն է «վերապահում»ը զոր անհրաժեշտ կը դառնէ «Արեւմտեան բիւրօ»ն: Բազմամեայ կռիւէ մը յետոյ, երկու կուսակցութիւնները կուրաբար իրարու գիրկ չեն կրնար նետուիլ անշուշտ. եւ եթէ Դրօշակեաններն իրենց վերապահումներն ունին, Հնչակեաններն ալ ունին իրենց վերապահումները: միայն թէ այդ բոլոր վերապահումները երկվայրկեան մը չէին կրնար արգելել դրօշակեան կուսակցութիւնը ուղղակի բանակցութեան մտնելէ Հնչակեաններուն հետ. խընդրուածը այդ էր միայն, եւ «ուղղակի բա-

(1) Օսմանցի պաշտականներու համաժողովին միջոցին հնչակեան պատգամաւորներ իրենց պարտք համարեցին դրօշակեան գրութեանը պատգամաւորին ոչ միայն յայտնել իրենց անկեղծ եւ բուռն փափաքը յեղափոխական տարրերու ամբողջական միութիւնը չուսով կատարուած տեսնելու, այլ եւ պարզի մանրամասնօրէն, տրփումաններով, փաստերով, այն ամբողջ հակամիութենական ջանքերը, զոր Արփիարեան կը կատարէր մութին մէջ պ. Մխիթարին իր ձեռքը գործիք մը դարձուցած:

նակցութեան մտնելը» միանալ ըսել չէ ան-  
պաճառ, ինչպէս որ Ազատական Թուրքերու  
Համաժողովին մասնակցելով՝ հայ պատգամա-  
ւորները Ազատական Թուրք եղած չեղան :  
Խնդրուածը այն էր որ Դրօշակեանները երկու  
երեք լիազօր կարգէին, որոնք յարաբերու-  
թեան մտնէին հնչակեան լիազօրներու : հետ,  
և քանակցէին, իրենց վերապահումները դէմ  
դիմաց անկեղծօրէն իրարու յայտնէին, իրենց  
մուտք թուած կէտերուն վրայ իրարմէ շացատ-  
րութիւն ուղէին, եւ վերջապէս յանգէին հա-  
մաձայնութեան մը, ինչ որ անխուսափելի էր՝  
եթէ երկու կողմէն ալ հաւասարապէս բարի  
կամեցողութիւն գնէին :

Դարձեալ բնական կը գտնեմ որ Դրօշակե-  
անները ձգտում ցոյց տան «միութեան բա-  
նակցութիւններէ մէջ, ինչպէս կը գրեն, լինել  
չըջանայեաց եւ խտապահանջ» : Եւ այն «չըջա-  
նայեաց եւ խտապահանջ» թող ըլլան բա-  
նակցութիւններն սկսելէ յետոյ, այսինքն ուղ-  
ղակի բանակցութիւնները, որոնք միակ ար-  
դիւնաւորներն են՝ ինչպէս նոր եւ հին Հնչակ-  
եանց միջեւ եղած բանակցութիւնները զայդ  
ապացուցին : Ի՞նչ մը կայ միայն որ անբնա-  
կան է, այն է որ Դրօշակեանք, այդքան շըր-  
ջանայեաց եւ խտապահանջ՝ յեղափոխական  
ամբողջ կուսակցութեան մը հանդէպ, բնաւ  
«չըջանայեաց եւ խտապահանջ չեն եղած» ի-  
րենց միջնորդ չէզոքին նկատմամբ, այն աս-  
տիճան որ կրցած են թոյլ տալ անոր որ զի-  
րենք դարերով սպասցնէ այսպիսի «վերջին  
խօսք» մը իրենց ներկայացնելու համար :

Այդ անբնական լիօրէն ծայրայեղ, այդ աւել  
ծուած ային ու վատառողջ յամատութիւնը որով  
«Արեւմտեան բիւրօ»ն կառչած մնաց պ. Մխիթ-  
թարին եւ շարունակեց զայն միջնորդ նկա-  
տել նրբ վեր. հնչ. կուսակցութիւնը շատոնց  
արդէն յայտարարած էր թէ ոչ մէկ միջնորդ  
չի ճանչնար, ամէն կասկածի իրաւունք կու-  
տայ, եւ մանաւանդ այն կասկածին զոր վե-  
րեւ յիշեցի, այսինքն թէ «Արեւմտեան բիւրօ»ն  
նկատած ըլլայ պ. Մխիթարը ոչ թէ իբրեւ  
միջնորդ, այն հնչակեան կուսակցութեան մէջ  
անցած դարձած բաներն իրեն հաղորդելու  
պաշտօնն ստանձնած անձ մը : Դէպքերու հա-  
կիրճ վերջիչում մը այստեղ անսպասու պիտի  
չըլլայ, ցոյց տալու համար «Արեւմտեան բիւ-  
րօ»ին բռնած բնութեան տարօրինակութիւնը :  
1901 օգոստոս Ծի թիւով, «Նոր կեանք»ը Միու-  
թեան կողմ արձակելով, յատկօրէն կը յա տնէ,  
յանուն վեր. հնչ. կուսակցութեան, թէ միութե-  
ան բանակցութիւնները ալիւս պէտք է կա-  
տարուին ուղղակի, առանց ո եւ է միջնորդի .  
այդ կոյր ամենամեծ խանդ ավառութիւն յառաջ

կը բերէ հայ հասարակութեան մէջ, «Շարժում»ն  
ու «Հայրենիք»ն իսկ զայն կը ծափահարեն :  
սիրինքսեան երկարատեւ լուծեանէ մը յետոյ,  
«Դրօշակ»ը կը շատանայ երկու տող հրատա-  
րակելով, երկու տող որով կը յայտարարէ թէ  
«Արեւմտեան բիւրօ»ն կը սպասէ միութեան  
բանակցութիւնները վարող չէզոք միջնորդին  
«վերջին խօսք»ին, եւ կը ցանկայ ամբողջ ար-  
տով (!) որ այդ խօսքը նպաստաւոր ըլլայ : .  
ուրեմն դրօշակեան կուսակցութիւնը, հակառակ  
Հնչակեաններուն յայտարարութեան, կը շա-  
րունակէր պ. Մխիթարը միջնորդ նկատել ու  
«վարիչ» բանակցութեանց որոնց այլեւս զո-  
յութիւն չունենալը դիտէր սակայն «Արեւմտե-  
ան բիւրօ»ն, աւելին կայ, «Արեւմտեան բիւ-  
րօ»ն կը ցանկայ որ միջնորդին «վերջին խօս-  
ք»ը «նպաստաւոր ըլլայ», հետեւցնել տալով  
ատկից որ եթէ այդ «վերջին խօսք»ը նպաս-  
տաւոր չըլլար, միւրքի նը չպիտի կատարուէր,  
ուրեմն «Արեւմտեան բիւրօ»ն պ. Մխիթարը կը  
նկատէր տեսակ մը պապ, աստուածային ան-  
սըխալական էակ մը, որուն մէկ բառէն կա-  
խեալ է յեղափոխական մարմիններու միութե-  
ան իրագործումը կամ վիճումը : . Այն ա-  
տեն վեր. հնչ. կեդրոնը, իր անդամներէն մէկուն  
միջոցով Մխիթարին կը յայտարարէ թէ զին-  
քը միջնորդ չ'ընդունիր, քիչ յետոյ պաշտօնա-  
կան գրութեամբ մը «Արեւմտեան բիւրօ»ին  
կը հաղորդէ իր այդ որոշումը : աս ալ չի բաւեր  
այս վտովիւրական կացութեան վերջ գնելու .  
պ Մխիթար կը շարունակէ ինքզինքը միջ-  
նորդ նկատել միշտ, եւ «արեւմտեան բիւ-  
րօ»ն ալ կը շարունակէ անոր «վերջին խօ-  
ք»ին սպասել . . . Եթէ այս բոլորը անցնէին  
մարդկային իրերու սովորական արամբարնու-  
թեանը համաձայն, պ. Մխիթար իր «վերջին  
խօսք»ն արտասանած ըլլալու էր այն օրն իսկ  
երբ վեր. հնչ. կուսակցութեան նոր կեդրոնը ի-  
րեն յայտարարեց թէ զինքը միջնորդ չ'ընդու-  
նիր, եւ ուրիշ բան չէր կրնար ունենալ ըս-  
լու իբր վերջին խօսք բայց եթէ հաղորդել «Ա-  
րեւմտեան բիւրօ»ին Հնչակեաններուն որոշու-  
մը, իսկ Դրօշակեանները Հնչակեանց կողմէ  
իրենց ուղղուած պաշտօնական յայտարարու-  
թեանէն յետոյ, այլեւս վայրկեան մը պարտք  
չունէին սպասելու ո եւ է անձի վերջին խօս-  
քին : Պարզապէս դիւցազնական է այն համ-  
բերութիւնը զոր Հնչակեանները ցոյց տուին  
սպասելով, ամբողջ ամիսներ, որ «Արեւմտեան  
բիւրօ»ին սպասումը վերջ գտնէ : «արեւմտեան  
բիւրօ»ն անոնց այդ ոտոյիկեան վարմունքը կը  
վարձատրէ անոնց քթին նետելով «վերջին  
խօսք» մը որ ուրիշ բան չէ բայց եթէ աղբի

չեղջակոյտ մը միութեան ճամբուն վրայ ձը-  
լուած . . .

.\*.\*

Այս բոլորը, սակայն, պիտի չարգելին որ  
տեղի ունենայ ուղղակի բանակցութիւնը՝  
ա՛յնքան ատենէ ի վեր ատաղարկուած ու բու-  
պասուած՝ հնչակեան ու դրօշակեան կուսակ-  
ցութեանց լիազօրներուն միջեւ: Այդ հանդի-  
պումը պիտի կատարուի՝ հակառակ բոլոր  
Մխիթարներուն եւ Արփիարեաններուն «Արեւ-  
մբան քիւր»-ին Յաւելուածը պատճառ մը չի  
կրնար ըլլալ որպէսզի հնչակեան միացեալ  
կեդրոնը որ ամբողջ կուսակցութեան քուէ-  
ովն ընտրուած ըլլալը ծանոյց այս օրերս, ետ  
կենայ եւ զոյգէ «Արեւմտեան քիւր»-ին վերջ-  
նական հրահերձ ուղղակի բանակցութիւններն  
սկսելու եւ «Արեւմտեան քիւր»-ն, որ այլ եւս  
ուրիշ «չէզոք» չունի՝ իր յագաղումը բայա-  
տրելու համար, ստիպուած է այլեւս տալ այդ  
հրահերձն այն միակ պատասխանը զոր կարե-  
ւի է ստիպելն, որպէսզի պիտի որոշէ իր լիազօրնե-  
րը եւ հնչակեան լիազօրներուն հետ յարաբե-  
րութեան պիտի դնէ զանոնք: Ճշմարիտ է որ  
«Դրօշակ»-ի Յաւելուածէն ի վեր «Շարժում»-ի  
եւ «Հայրենիք»-ի այն բոլոր յօդուածները(1) ու-

րոնք՝ պ. Մխիթարի «վերջին խօսք»-ին կրթը-  
նելով կը յայտարարեն թէ «պէտք չէ միա-  
նալ Հնչակեաններուն հետ», այս լուստես ու  
բարեցակամ ակնկալութեան ամբողջութեան կա-  
կածի տակ գնելու իրաւունք կուտան, եւ  
կրնան նոյն իսկ յոռեան, սկեպտիկ մտքի մը  
ներչնչել այն մտածումը թէ «Արեւմտեան  
քիւր»-ն զիտմամբ հրատարակած է այս վեր-  
ջին յաւելուածը՝ ճիշդ այդ պահուն ուր հնչ-  
ակեան Մխիթարները լիովին յաջողելով բա-  
ցործակապէս հաւանական ու մտաւորաւ կը  
կոստուցանէր ամբողջական միութիւնը որպէս-  
զի ամբողջ դրօշակեան կուսակցութեան մէջ  
յոռի սպաւորութիւն մը ստեղծելով հանդէ-  
Հնչակեաններուն, մերժել ուղղակի բանակցու-  
թեան մտնել Հնչակեան միացեալ կեդրոնին

Մկրտիչեան (ինկած Մարգուն աջ թեւը),  
ինկած Մարգը, Բաշալեան («Նոր կեանք»-ի  
նախին խմբագիր), եւն, եւն:

Նսխ պ. Վոսմեան կ'ուզէ խարել հասարակու-  
թիւնը յայտարարելով թէ այս յիշուած անուն  
ներէն ուրիշ ընտու գործիչ չկայ հնչակեան  
կուսակցութեան մէջ, եւ թէ անոնց հեռացու-  
մով հնչակեան կուսակցութիւնը գոյութիւն  
ունենալէ կը դադրի: Երկրորդ, այդ ցուցակը  
կազմուած է ամենամանձիշդ տեղեկութեանց  
վրայ: Կան անձեն այդ ցուցակին մէջ յի-  
շուած՝ որոնք երբեք չեն հեռացած հնչակեան  
կուսակցութեանէն: Իսկ թուժայեան եւ Գայա-  
եան Մարգուանի մէջ «զլխաւոր գործիչներ»ը  
չեն եղած: նմանապէս՝ պ. Մխիթար ոչ մէկ  
մասնակցութիւն չէ ունեցած 95ի յեղափո-  
խական գործունէութեան (ինքն իսկ ինծի կը  
դրէր 93ի ապրիլ 14ի թուականով նամակի  
մը մէջ՝ «Ես եբբ Պոլիս էի՝ չմասնակցեցայ  
ամենեւին յեղափոխական գործին»: Բայց ա-  
մէնէն տարօրինակը՝ այդ ցուցակին մէջ զըտ-  
նուելին է Արփիարեանի, Բաշալեանի, Լ. Մկր-  
չեանի, Աղասիի, Ճանկիւրեանի եւ Աղասի Նա-  
րեկեանի անուններուն, տարիներով Դրօշակ-  
եանները «մասնիչ» համարեցին Արփիարեանը  
եւ անոր վտարումը: պահանջեցին, Բաշալ-  
եանն ու Աղասին «նրբացեալ սրիկայ» անու-  
անեցին 1900ի Յաւելուածին մէջ: Մկրտչեանի  
ու Աղասի Նարեկեանի դէմ անարգական յօ-  
դուածներ հրատարակեցին, եւ հիմա «Շար-  
ժում»ը «խաչադող» կ'անուանէ ճանկիւրեանը:  
արդ. պ. Վոսմեան այժմ «անուն եւ փորձառու-  
թիւն ունեցող» գործիչներ կը նկատէ այդ  
անձերը ու անոնց շեռացումը ցաւալի դէպք մը  
կը համարի: . . . Ամենէն խայտառակ կապիկը  
աւելի տրամաբանութիւն ունի վերջապէս եւ  
աւելի բարոյական: «Արեւմտեան քիւր»-ն, եւ  
թէ իրօք սովորութիւն ունենար «խստապա-  
հանջ» ըլլալու, պէտք էր նախ խստա-  
պահանջ ըլլար իր վոսմեաններուն հանդէպ:

(1) «Հայրենիք»-ին վերջերս նրատարակած  
հակահնչակեան, հակաՄխիթարեանական զրուելի  
յօդուածներուն շարքին մէջ կայ հատ մը ու-  
րուն վրայ ինքզինքս չեմ կրնար արդէ-  
ւել այստեղ հրահերձէ «Արեւմտեան քի-  
ր»-ին ուշադրութիւնը: Յաւելուածի մը մէջ,  
ուր անտարազիբ ու երեւակայական հնչակ-  
եաններու զիմակին տակ պահուրտող ողորմե-  
լիներ ամենէն անարգ ու ապուշ ա՛բաստա-  
նութիւններովը կը բռնաւորեն վեր հնչակ-  
եանց վերջին կեդրոնական վարչութեան ան-  
դամները՝ յակասէ յանուանէ յիշելով զանոնք,  
սա ապշեցնող յոգևածը կը փայլի: «Թէ վե-  
րը տպուած նամակներէն եւ թէ ցարք հրատա-  
րակուած իրողութիւններէն կը հետեւի թէ  
քիչ-չատ անուն կամ փորձառութիւն ունեցող  
նոր հնչակեան վարիչներուն ՄԵՄԱԳՈՅՆ մա-  
սը, մանաւանդ հին գործիչները, կամ հրաժա-  
րած են կուսակցութեանէն եւ կամ չէզոքացած  
այսպէս փրոֆ. Թումայեան, Գայաեան (Մար-  
գուանի զլխաւոր գործիչները), Աղասի-Հասօ  
(Զէյթունի զլխաւոր հնչակեան հերոս), Աղասի  
Նարեկեան (Ռուսմանիայ հնչակեան ներկայա-  
ցուցիչ), Փլըստեան (1890ի հնչակեան-արմե-  
նական ցոյցի զլխաւոր զերակատարներէն), Յ.  
Ճանկիւրեան (1890ի ցոյցին հերոսներէն),  
Տամատեան Միհրան (Սասունի մէջ Մուրա-  
տին ընկերը), Մխիթար (1895ին ցոյցի ատեն  
զիւանազխական թուղթերու խմբագրող),  
Մ. Սվալլեան (Երպրոսի ներկայացուցիչ, եւ ա-  
ռաջին ատենապետ կեդր. վարչութեան), Լ.

հետ՝ առարկելով թէ դրօշակեան կուսակցու-  
 թեան պատասխանատու մարմինները անպու-  
 տեհ կը նկատեն ո եւ է բանակցութեան մտնել  
 կուսակցութեան մը հետ որ այլ եւս «կազմա-  
 լուծուած» : «գոյութիւն չունի իբր «կազմա-  
 կերպութիւն» : Ու անկարելի իսկ չէ ենթադ-  
 րել, — որքան ալ ենթադրութիւնը Ալֆոնս  
 Ալէի արժանի զաւելտականութիւն մ'ունենայ  
 — որ երբ Հնչակեան միացեայ կեդրոնը իր  
 կազմուած ըլլալը ծանուցանէ «արեւմտեան  
 բիւրօ»ին, «արեւմտեան բիւրօ»ն դարձեալ  
 դիմէ իր «չէզոք»ին, սպասելով անկից այս ան-  
 գամ ոչ թէ «վերջին» այլ «յետսագարձ» խօսք  
 մը, եւ պ. տիտիթարն ալ, նոր քննութիւն մը  
 բանալով եւ այս անգամ հին Հնչակեաններն  
 ալ իր «պատին ու վարագոյրին ետեւը նայող»  
 միջնորդի խուզարկութեամբը պատուելով,  
 տարի մը յետոյ ելլէ նոր տեղնկապիւր մը զրկել  
 «արեւմտեան բիւրօ»ին՝ հայրաբար յորդորելով  
 «չըջանայեաց» Դրօշակեանները որ չարկա-  
 ծուին բանակցութեան մտնելու Հնչակեան  
 նոր կեդրոնին հետ ուր, — պիտի հաւաստէր,  
 — արդէն գտնուող պաշտ-պօզուք Քիւրտերուն  
 վրայ հիմա աւելցած են վայրագ Սազախներ : . .  
 Որքան ալ մինչեւ այժմ անցած գէպքերը ամէն  
 ենթադրութիւն հաւանական կը դարձընեն, ին-  
 ծի (որ, կը խոստովանիմ, անբուժելի լաւատես  
 մըն եմ) անկարելի կը թուի որ «արեւմտեան  
 բիւրօ»ն շարունակէ այլ եւս այդպիսի մի-  
 ջոցներով ձգձգել միութեան խնդրոյն լուծու-  
 մը : Ծարուսակելով այդպէս վարուիլ, «արեւ-  
 մտեան բիւրօ»ն ուրիշ արդիւնքի պիտի չկա-  
 րենայ յանգիլ բայց եթէ որոշապէս սպա-  
 ցուցանելու թէ Դրօշակեանները, որ հաւանած  
 էին միութեան բանակցութիւններու՝ երբ կը  
 կարծէին թէ այդ բանակցութիւնները պիտի  
 յանգէին Հնչակեաններուն ձուլմանը Դրօ-  
 շակեանութեան մէջ, այժմ այլեւս չին ուղեր  
 միութիւնը՝ երբ կը տեսնեն թէ միութիւնը  
 պիտի ըլլայ «միութիւն» եւ ոչ թէ «ձուլում» :  
 Արդ, եթէ նոյն իսկ այդպէս կը մտածեն, շատ  
 աւելի խելացի ու անկեղծ ընթացք մը ունե-  
 ցած պիտի ըլլան ատի բացէ ի բաց ըսելով,  
 քան թէ անհանդուրժելի երկգիմութեանց մէջ  
 յաւերժացնելով իրենց դիրքը : Կացութիւնը,  
 ինքնին շատ պարզ է հիմա : Երբ հնչակեան մի-  
 ացեալ կեդրոնը իր կազմուած ըլլալը իմացնէ  
 «արեւմտեան բիւրօ»ին, «արեւմտեան բիւրօ»ն  
 չի պարտաւորուած է այլ եւս ՈՐՈՇ պատասխան մը տալ  
 կը մաղթեմ խորապէս որ այդ պատասխանը  
 «այո՛» ըլլայ : Դրօշակեաններուն, Հնչակեան-  
 ներուն, ամբողջ ազգին շահը այդ կը պահան-  
 ջէ : մինչեւ հիմա գոյութիւն ունեցած բոլոր  
 «անջատող» շարժառիթները՝ որոնց շատերը

յիմար, անիմաստ թիւրիմացութիւններու  
 վրայ հիմնուած են, ու մինչեւ հիմա պատահած  
 բոլոր տխուր վէճերն ու կոնքերը կրնան բո-  
 լորովին մոռցուիլ, երբ Դրօշակեանները Հըն-  
 չակեաններուն հետ իրենց ունենալիք բա-  
 նակցութեանց մէջ դնեն միութեան այն ան-  
 կեղծ սէրը, յանգելու բացարձակ կարի կամե-  
 ցողութիւնը զոր վերեւ հին Հնչակեանները  
 ցոյց տուին իրարու հետ ունեցած իրենց բա-  
 նակցութեանց մէջ : Մեր ազգը անտելի կա-  
 ցութեան մը մէջ է, մեր դատին լուծումը ա-  
 հագին ճիգ մը կը պահանջէ. անհրաժեշտ է որ  
 հայկական գործօն կազմակերպութիւնները  
 վերջնապէս ջնջեն իրարու դէմ դէնք բարձ-  
 րացնելու ամօթալի սխտեմը եւ իրենց բու-  
 վանդակ ուժերը միացնեն հասարակաց թշա-  
 միին դէմ : Հնչակեանները պատրաստ են — եւ  
 ապացուցին զայդ — ամէն ջանք ընելու որ  
 գժտութեան աղէտքը բարձուի եւ միութեան  
 անհուն բարիքը իրագործուի : Դրօշակեաննե-  
 րու այսուհետեւ բռնելիք ընթացքէն կախում  
 ունի այդ էական Գործին յաջողումը կամ վի-  
 ժումը :

Ա. ՉՊԱՆԵԱՆ

Յ. Գ. — Այս յօդուածը գրելէս յետոյ իմացայ  
 որ «Արեւմտեան բիւրօ»ն Հնչակեան կուսակ-  
 ցութեան կեդրոնական վարչութեանը պիտի  
 է օրպէս զի երկու կուսակցութիւնները միա-  
 սին ստորադրեն հայ յեղափոխականներու կող-  
 մէ Պրիւսէի Համաժողովին զրկուելիք գրու-  
 թիւն մը, եւ թէ այդ գրութիւնը զրկուեր է  
 իրօր՝ «արեւմտեան բիւրօ»ին եւ Հնչակեան կեդ-  
 րոնին ստորադրութեամբը : Հաճոյքով կ'ար-  
 ձանադրեմ այս իրողութիւնը, բայց ատի պատ-  
 ճառ մը չեմ կրնար նկատել սող մը փոխելու  
 վերեւ գրածներէս, ընդհակառակն հիմա աւելի  
 տարօրինակ կը թուի ինծի դրօշակեանց ըն-  
 թցքը, եթէ «արեւմտ. բիւրօ»ն այնքան կը  
 յարգէ Հնչակեան կուսակցութիւնը որ պաշ-  
 տօնական գրութեան մը ներքեւ իր ստորադր-  
 ութեան հետ Հնչակեան կեդրոնական վար-  
 չութեան ստորադրութիւնը կ'ուզէ ունենալ  
 ինչո՞ւ ուրեմն հրատարակեց հնչակեան կու-  
 սակցութիւնը վարկաբեկիլ ձգտող յաւելում  
 մը : Եւ ի՞նչ պիտի մտածէին Պրիւսէի հաւաք-  
 ուած հայասէրները : Եթէ այդ երկու կուսակ-  
 ցութիւնները եղբայրաբար միացած ցոյց  
 տուող թուղթը իրենց արուած միջոցին՝ հայ-  
 ստեանց մը ելլէր անոնց բաժնել «Դրօշակ»ի  
 Յատկութեան թարգմանութիւնը . . . Այս ան-  
 տանելի, այս անհերելի կացութիւնը պէտք է  
 վերջ գտնէ, եւ ատի կրնայ միայն կատարուիլ  
 հետեւելով այն ուղղութեան զոր Հնչակեան-  
 ները պծեցին եւ որուն գործնականութիւնը  
 զրականապէս ապացուցին :

ԻԿԵՄԻՆԻ

ԳԵՐ. ԱՐՄԷՆ ԱՅՏՆԵԱԿՆ

Ալիշանէն յետոյ, Այտնեանն ալ կը կորսըն-  
ցընենք. մեծ բանաւտեղծէն յետոյ անա մեծ  
զիտունը որ մենէ իսպառ կը բաժնուի. հայ-  
կական երկինքը, արդէն անհելի ամպերով  
խաւարոտած, կ'որբանայ հեազհատէ այն մէկ  
քանի խոշոր աստղերէն որոնք իր գեղեցկա-  
զոյն զարդերը, ու մեր միւթաբուծիւնը, կը  
կազմէին: Ճշմարիտ է որ Այտնեան ալ, ինչ-  
պէս Ալիշան, կը մեկնի՝ խոր ձերութեան մէջ  
իր գործը աւարտելէ յետոյ. բայց իր մահուան  
գոյժը մեր սիրտը կը ճվէ՝ որպէս թէ գեոտար  
տաղանգի մը մանգաղումն իմանայինք. Այտն-  
եանի պէս զէմքեր, որքան ալ բեռնաւոր ըլլան  
տարիներուն զէզովը, միշտ թարմ ու կենսու-  
նակ կը թուին այն ազգին որուն բարոյական  
ուժը բազմապատկեցին իրենց մտաւոր ճառ-  
գայթուժովը, եւ մարդ ըմբոստացումի, սուր  
կակիժի տպաւորութիւն մը կ'ունենայ: անոնց  
վերջնական ընկուզումն իմանալով անտաւառ  
խաւարին մէջ, անոնց համար մանաւանդ ու  
բազմ: ունեցած էին այդ վեհաշուք ու միան-  
գամայն ա՛յնքան սիրուն ձերունին մտնէն  
ճանչնալու, կակիժը կրկնապէս սաստիկ պիտի  
ըլլայ. աչքին ասջեւ է միշտ իր ալեւոր արծիւի  
վսեմ գլուխը, մագերուն ու մօրուքին անհուն  
ձիւներուն մէջէն՝ աչքերուն երկու սեւ ու  
խորունկ ու մշտաշարժ բոցերովը լուսաւորուած  
եւ պարթեւ հասակի մը կատարը խորխորէն  
կանդուն. կը յիշեմ իր պարզ, սրամիտ ու խո-  
հական խօսակցութիւնը, ու այն ամբողջ ան-  
սեթեւեթ ու հայրական ընդունելութիւնը որով  
զիս պատուեց՝ երբ չորս տարի առաջ վանքին  
ձեռագիրներն ուսումնասիրելու համար մէկ ու  
կէս ամիս անցուցի վիեննա, ու այն մտածու-  
մը թէ այդ հազուադիւրս ապնուութեան էակը՝  
որուն մէջ այնքան պայծառ եւ այնքան հզօր  
միտք մը կը վառէր՝ այլեւս ամի մը մոխիր է  
հիմա, զիս կը լեցնէ անդարմանելի ցաւերուն  
մեծ տխրութիւնովը:

Այտնեան ամբողջ մասնադարան մը չի թո-  
ղուր մեղի՝ Ալիշանի պէս, այլ մէ՛կ գիրք մը  
միայն, Աշխարհաբարի ընդունական քերականու-  
թիւնը: Բայց այդ միակ գիրքը կը բաւէ ան-  
կուրուստ պահելու իր անունը, որովհետեւ  
գործ մըն է գերազանցապէս ամուր ու կատա-  
րեալ, յա իտինապէս կենսունակ, գործ մը որ  
ոչ միայն կ'ապացուցանէ զայն իրականացը-  
նողին հզօր, պայծառ ու լրջօրէն կազմուած  
միտքը, այլ եւ զայն յղացողին յանդուգն ու  
կանխատեսողին, արդարեւ, մեծ կանխատեսու-

թիւն պէտք էր ու մեծ յանդգնութիւն՝ որ-  
պէս զի Միւթաբան վանական մը, այսինքն  
գրաբարին տարամերժ պաշտումովը եւ աշխար-  
հաբարին ստեղծութեամբը տողորուած միտք  
մը, ելլէր աշխարհաբարին կեանքի իրաւունքը  
հռչակէր, գրաբարի վերակենդանացման իւ-  
թովիին ու գրաբարախառն աշխարհաբարին  
անիմաստութեանը դէմ՝ յարձակէր, այսպիսի  
միջոցի մը երբ գրաբարին դաւանանքը միա-  
հեծան կը տիրէր վիենետիկ ու վիեննայի Միւթ-  
թաբաններուն մէջ (Քաթրճեան գրաբար գրած  
էր իր «Տիեզերական պատմութիւն»ը, Քարա-  
քաչեան նմանապէս գրաբար՝ իր «Նկարագիր  
ուսմանց»ը եւ գրաբարախառն այլանդակ աշ-  
խարհաբարով մը՝ իր «Քննական Հայոց պատ-  
մութիւն»ը), երբ նոյն իսկ Պոլսոյ մէջ, բաց ի  
աշխարհաբարին դասը պաշտպանող քանի մը  
գրադէաներէ՝ գրաբարին մոլեռանդները մեծա-  
մասն ութիւնը կը կազմէին:

Եւ քաջութիւնը զոր ցոյց տուած է Այտնե-  
անն՝ աւելի մեծ է անով որ ոչ միայն ու-  
րիշներուն այլ ինքն իրեն դէմ իսկ ստիպու-  
ած էր ի գործ դնել զայն, որովհետեւ ինքն  
իսկ, ոչ միայն գիտուն, այլ եւ արուեստագէտ  
միտք, գեղեցկութեան զգացումն ունեցող,  
գրաբարին սիրահար էր ջերմօրէն, Բայց գեր-  
մանական առողջ կրթութեամբ մը կազմուած  
իր միտքը գիտցած էր բանաստեղծական նա-  
խասիրութիւնները զոնեւ գիտական սկզբունք-  
ներուն անողորք ու նուիրական բազինին վը-  
րայ. այն քննող, անաչառ, աննախապայար-  
ողին որով Քաթրճեան ու Քարաքաչեան Հա-  
յոց պատմութիւնը վերլուծած էին, Այտնեան  
անոր ենթարկեց Հայոց լեզուն, եւ տրուած  
ըլլալով մեթօտը որուն կը հետեւէր, եզրա-  
կացութիւնը որուն հասաւ, անխուսափելիօրէն  
միակ եզրակացութիւնն էր որուն կրնար հաւ-  
նիլ. իրեն պէս յստակ միտք մը չէր կրնար  
չնչմարել որ Հայերը չէին կրնար բացառու-  
թիւն մը կազմել լեզուներու պատմութեան  
մէջ յաճախ կրկնուած եւ օրէնք դարձած երե-  
ւոյթի մը դէմ. գրաբարը, որքան ալ գեղեցիկ  
ըլլար, մեռած էր այլ եւս, ու մեռելները հան-  
գիստ պէտք է թողուչ աշխարհաբարը գրա-  
բարին կենդանի յաջորդն էր, եւ իր կենդա-  
նութիւնը բաւական էր՝ իր գերադասութիւնն  
արդարացնելու համար. անհրաժեշտ էր աշ-  
խարհաբարն ընդունիլ իբր գրական լեզու, եւ  
աշխարհաբարը՝ իր ինքնուրոյն կազմուածքով,  
իր որոշ քերականութեամբ ու ռժով՝ այնպէս  
ինչպէս մոլորվորը զայն չիմած էր: Եւ Այ-  
տնեանն ոչ միայն աշխարհաբարին իրաւունքը  
պաշտպանած է, այլ եւ անոր կազմութեան  
մանրամասն պատմութիւնը գծած է եւ այդ  
պատմական հիմունքներուն վրայ յենլով ճշդած  
է աշխարհաբարի քերականութիւնը:

Այտնեան մեծ եղած է նաեւ իբրեւ արքա-  
հայր: Իր ուշիմ, եռանդուն ու ազատամիտ  
վարչութեանը շնորհիւ է որ վիեննայի վանքը

հասած է այն բարձր դիրքին զոր կը վայելէ այսօր հայ ու եւրոպացի բանասէրներու յարգանքին մէջ . միաբանութեան նորագոյն գործիչները , Տաշեան, Գալէմքեարեան , Մենելիչեան , եւն շատ բան կը պարտին իրեն՝ իրենց մտքին . կազմութեանը , իրենց գործունէութեանը դիւրացմանը տեսակէտով : Այսնեան ամէն ազատութիւն տուած է անոնց իրենց սիրած ճիւղերուն մէջ ուղած ձեռովնին հետազոտութիւններ , յննական ուղեւորութիւններ ընելու . ամէն գործողութիւն յանձն առած է՝ լոյսի մէջ զննելու համար Տաշեանի մը տաղանդը , հրատարակելով՝ հակառակ հարկ եղած մեծ ծախքերուն՝ անոր ըստուար աշխատութիւնները , որոնք չձախուելու սահմանուած էին եւ գիտութեան միայն ծառայութիւն մատուցանելու բնութիւնն ունէին : Երբ այդ երիտասարդներու խումբը «Հանդէս ամսօրեա»ն հրատարակելու գաղափարը յղացաւ , վաճառին «հին»երը հակառակեցան՝ անօգուտ եւ վանքին պիտօճէին համար վնասակար նկատելով այդպիսի ձեռնարկ մը . Այսնեան երիտասարդներուն կողմը բռնեց ըմբռնելով անոնց գաղափարին օգտակարութիւնը , եւ «Հանդէս ամսօրեա»ն , որ Հայոց առաջին բանասիրական լուրջ թերթը եղաւ , կրցաւ հիմնուիլ իր շնորհիւ : Այսնեան , իբր արբահայր , վնասակար եղած է մէկ անձի մը միայն , — իրեն՝ իր բոլոր ուժերը , իր բոլոր ժամանակը նուիրելով վարչական պաշտօնին , կասեցուցած է իր գիտնականի գործունէութիւնը , որ , եթէ շարունակուած ըլլար խցիկի մը անդորրութեանը մէջ , անշուշտ «Քրեական քերականութեան» պէս քանի մը ուրիշ գործեր կ'ունենայինք այսօր Այսնեանէն ստորագրուած , Այսնեան խորհած է որ վիեննայի վանքին պէս հաստատութեան մը վարչութիւնն ալ «գործ» մըն է , այնքան շահեկան ու դեղեցիկ որքան գրքի մը յօրինումը , եւ սիրով գրած է այդ գործին՝ իր հեղինակի փառասիրութիւնները : Եւ արդէն եթէ զազրած է գրելէ՝ արբահայր կարգուելէն ի վեր , անշուշտ չէ գաղաճ երբեք մտածելէ , ջննելէ , խուզարկելէ , եւ «նոր»երը անոր մէջ յաճախ գտած են անշուշտ թանկագին թելադրիչ մը եւ խորհրդատու մը , եւ անոնց գործերուն մէջ ան՝ այսպէս՝ իր աշխատակցութեան բաժինն ունեցած է : Կար միայն նիւթ մը որուն համար իր վարչական զբաղմանց յատկացուցած ժամանակէն քիչ մը կը գողնար երբեմն՝ անոր վրայ անձնական ուսումնասիրութիւններ կատարելու համար , այն է հայկական եկեղեցական երաժշտութիւնը : Ընդիւ չեմ դիտեր թէ ի՞նչ ուղղութեան , ի՞նչ յատակադի վրայ էին այդ ուսումնասիրութիւնները . եթէ նոթեր կամ արդէն խմբագրուած էջեր թողած է՝ նոյն իսկ կիսաւարտ , միաբանութիւնը անշուշտ զանոնք պիտի հրատարակէ : Գիտեմ միայն որ իր այդ աշխատութեան մէկ մասը նուիրած էր

հայկական պատարագր , զերման երաժշտի մը աջակցութեամբ , եւրոպական երաժշտութեան վերածելու . անկեղծօրէն պիտի խոստովանիմ սակայն , որ վիեննա գտնուած միջոցիս առիթ ունենալով ունկնդրել այդ պատարագը՝ նուագախումբի շնկերակցութեամբ՝ եւրոպացի երգիչներէ երգուած , անախորժ տպաւորութիւն մը կրեցի . մեր պարզ սրտաբուխ ու մեղանոյց երաժշտութիւնը՝ վերափոխ օրերաներուն պոռոտ ու «թատերական» ուսկուութիւնն ստացած էր այդ նոր տարագին մէջ :

Այսնեան իր մասաւոր յատկութիւններուն կը միացնէր շատ ազնիւ սիրտ մը՝ անոր մէկ գեղեցիկ ապացոյցը տուաւ դէպքի մը մէջ զոր գաղանի պահելու պարտքէն այլ եւս վերձ կնք , զոր նոյն իսկ պարտաւոր ենք այժմ ճանչցնել հասարակութեան , սրովհետեւ այդ դէպքին մէջ Այսնեանի ցոյց տուած ընթացքը մին է իր կեանքին գեղեցիկ գծերէն :

Երեք տարիի չափառաջ , կիլիկիոյ զանազան քաղաքներու մէջ , եւ մտնուանդ Մերսին , բազմաթիւ Հայեր ձերբակալուեցան՝ կարգ մը թղթեր բռնուած ըլլալու պատրուակով՝ միեւնոյն պատրուակով թուրք կառավարութիւնը Մերսին հաստատուած աւստրիական հպատակ մը ստիպեց իսկոյն երէքէն հեռանալ , աւստրիական կառավարութիւնը , իր հպատակին դէմ եղած նախատական վարմունքին եւ անոր հասցուած վնասին փոխարինութիւն պահանջեց , եւ նոյն իսկ զբահաւոր մը զրկեց Մերսին . թուրք կառավարութիւնը իսկոյն համակերպեցաւ Աւստրիոյ պահանջքին , բայց հայ բանտարկեալները մնացին բանտերուն մէջ , ու հաւրածանքը աւելի ուստկացաւ կիլիկիոյ մէջ . իրերու այդ վիճակը հազորդեցի Այսնեանին եւ խնդրեցի որ Թրանց-Եողէֆ կայսեր հաճի դիմել՝ որպէս զի թուրք կառավարութեան վրայ ազդեցութիւն բանեցնէ՝ «աւստրիացիի մը պատճառով» նեղուող Հայերուն չարչարանքին վերջ գնելու համար . ազնիւ ձերունին չվարանեցաւ կատարելու իրեն եղած այդ խնդրանքը , զիմեց կայսեր՝ որ իր անձին հոտար մեծ յարգանք կը տածէր , եւ ամիս մը չանցած՝ բոլոր բանտարկեալներն արձակուած էին :

Ա. ԶՊԱՆԵԱՆ

ԱՆՍՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Անահիտը կը հրատարակուի ամիսը անգամ մը :  
 Բաժանորդագիրն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ),  
 2 տուլար (Ամերիկա), 5 բուլլի (Ռուսիա) :  
 Վեցամսեայ՝ 10 ֆր. (Ֆրանսա), 6 ֆր. (օտար երկիրներ), 1 տուլ. (Ամերիկա), 3 բուլլ. (Ռուսիա) :  
 ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ ԿԱՆԽԻԿ Է :  
 Ձեռագիրները ետ չեն դարձուիր :  
 Կ'ընդունուին ազգեր :

Նամակ, յօռած եւ բաժանորդային ղրկել հետեւեալ հասցէին՝

A. TCHOBANIAN

17. RUE LA BRUYERE

PARIS

«ԱՆՍՆԵՐԻ» Գ ՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Թիֆլիս —	Պարոն Գէորգ Մելիք-Կարապետեան
Պաքու —	» Ա. Մ. Մոցիկեան
Ռուսճուք. —	» Նշան Ս. Յորոսեան
Ֆելիպէ. —	» Ա. Տեմիրճիպաչեան
Պուքրէշ. —	» Արիս Լազար.
Դաւրէժ. —	» Տր. Կ. Փաշայեան
Նիւ-Նորք. —	» Կատարեան
Բրովիտէնս. —	» Նաղարէթ Թաթէոսեան
Ֆրեզնո. —	» Աւագ Կարապետեան
Իսթ Ուոթըրթաուն. —	» Մանուկ Դալստեան
Ուսթըր. —	» Երուանդ Յակոբեան
Չիքակո. —	» Ա. Կարակալուրեան
Պրսթոն. —	» Ա. Փառազարդեան

# ՀԱՆԴԵՍ

## ԱՄՍՕՐԵԱՅ

ՈՒՍՈՒՄՆԱԹԵՐԹ

Բաժանորդագրինն է՝ տարեկան 10 Ֆր. (4 րու.) :  
ԴԻՄԵՆ՝ A la Rédaction de la Revue «Hantess» :  
VII/2 Mechitaristengasse, 4. VIENNE Autriche

# ԱՐԱՐԱՏ

Պաշտօնական ամսագիր հայրապետական  
աթոռոյ Ս. Էջմիածնի

Բաժանորդագրութիւնն է . 4 րու. (13 Ֆր.) :  
ԴԻՄԵՆ՝ Rédaction de la Revue «Ararat»  
ETCHMIADZIN (Caucase)

# ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Կը հրատարակուի տարեկան երկու շաբաթ :  
Երկու շաբաթ տարեկան բաժանորդագրինն է,  
3 րու. պի կամ 10 Ֆրանք :  
ԴԻՄԵՆ՝ Ervand Lalayantz, Séminaire Nersissian  
Tiflis, Caucase

# ԼՈՒՄԱՅ

Գրական հանդէս

Կը հրատարակուի երկու ամիսն անդամ մը :  
Բաժանորդագրինն է, տարեկան 6 րու. պ. (20 Ֆր.) :  
ԴԻՄԵՆ՝ Թիֆլիս, խմբագրութիւն «Լուսնայ»ի :

Բացում է 1902 թ. բաժանորդագրութիւնը

# Մ Ո Ւ Ր Ճ

ԳՐԱԿԱՆ, ՀԱՍՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

Նոր շրջան Բ. տարի

Խմբագիր-հրատարակիչ Կ. ԿՐԱՍՆԻՆԻԿԵԱՆ

Խմբագրութեան անդամներն են՝

ԼԵՒՈՆ ՍԱՐԳՅԻՍԵԱՆ եւ ԼԵՕ

Բաժանորդագրինը . Ռուսաստանում 10 րու. ,  
արտասահման 12 րու. (30 Ֆր.) : Հասցէ  
փոխելու համար պէտք է ուղարկել 40 կոբ. Ա.  
պատիկ կամ ձրի ոչ ոքի չէ ուղարկուած ՄՈՒՐՃ :  
Հասցէ՝ Tiflis, Rédaction de la revue  
"Mourtch"

# ԱՂԲԻԻԲ

Բաժանորդագրինն է՝ տարեկան 3 րու. պ. (8 Ֆր.) :  
Հասցէն՝ Tiflis. Rédaction de la revue AGBUR

# ՏԱՐԱԶ

Բաժանորդագրինն է՝ տարեկան 6 րու. պ. (15 Ֆր.) :  
ԴԻՄԵՆ՝ Tiflis. Rédaction du journal TARAZ

# ՍՏԱՅՈՒԿԱԾ, 1902 ԵՐ

## Դեռոգ Մեղիֆ-Կարապետեան .

Գերմանական օգնութեան ընկերութիւնները Տաճկա-  
հայաստանի համար. Թիֆլիս, տպարան Տ. Մ. Բոտինեանցի  
գին 35 կո. :

Գերմանեայի հայ ուսանողութիւնը . Թիֆլիս տպարան  
Կ. Մարտիրոսեանցի . գին 20 կոպէկ .

## Սուրիսա վ. Պարոնեան

Քաղկեդոնական ժողով եւ Հայաստանեայց եկեղեցի .  
Փարիզ, տպարան «Բանասեր»ի . գին 2 Ֆրանք 50 սանթիմ :

## Տանդի

Աստուածային կատակերգութիւն . — Խ. Դոմիք, թարգ.  
Տ. Արսէն Ղազիկեան : Վենետիկ, Միխիթարեան տպարան .  
գին 2 Ֆրանք 50 սանթիմ :

## Մ. Լարիօհոսով

Դեւ, արեւելեան վեպ, թարգմանեց ընաչոյց Յ. Զ. Մեր-  
զայեանց : Թիֆլիս, 1901 . գին 10 կոպէկ :

## Հրատ. Յովհաննէս Արամեանցի

1. Մահակ Պարթեւ . կազմեց Ե. Թ. գին 5 կոպէկ :
2. Բեռնսօն, կազմեց Ե. Թովչեան . գին 10 կոպէկ :
3. Մահակ, գին 7 կոպէկ :
4. Մեռոպ Մաշտոց, գին 5 կոպէկ :
5. Հառապաման, գին 15 կոպէկ :

## Էմիլեան ազգագրական ժողովածու

Հատոր ա. — Փջրանք Շիրակի ամբարներէց, հաւաքեց  
Աղ. Միխիթարեան : Մոսկուա-Ալեքսանդրապոլ, գին 1 ր. :

Հատոր բ. — Ժողովրդական վեպ եւ հեքիաթ . հաւա-  
քեց Ս. Հայկունի : Մոսկուա-Վաղարշապատ . գին 1 ր. 25 կ. :

Հատոր գ. — Փուրքերէնէ փոխ առեալ բաւեր հայերե-  
նի մէջ, գրեց Ղ. Աճառեան : Մոսկուա-Վաղարշապատ,  
1902, գին 1 ր. 50 կ. (4 Ֆր.) :

## Մենե կը խնդրուի ծանուցանել

Լոյս տես

## ՈՒՒԼԻՄ ՈՒՕԻՍԸՆ

## ԾԻՐԱՆԻ ԱՐԵՒԵԼՔ

Յարգմ. անդէրէնէ

ԽՈՍՐՈՎ

Գին 50 սան.

Գինեւ ուղղոյնք պէտք է գիմեն՝

M. ARMÈNE ARDONTZ 43, Douglas Road.  
MAIDSTONE Angeterre